The background is a solid blue color. On the left side, there are several large, overlapping, semi-transparent shapes in shades of pink, orange, green, and light blue. On the right side, there is a vertical stack of smaller, solid-colored rectangular blocks in shades of pink, orange, green, and light blue. The text is centered in the lower half of the page.

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
2021 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ



Տարեկան զեկույց. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2021 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ (մայիս, 2022 թ.):
Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԲԱԺԻՆ 1. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ	8
Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ	9
ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումների ընդհանրական վերլուծություն	11
ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ	15
Ֆիզիկական բռնության դեպքեր	16
Սեռական բռնության դեպք	20
Շորթում	20
Ծառայությունների տրամադրումից հրաժարում	21
Անձնական տվյալների տարածում կամ դրա սպառնալիք	22
Ընտանեկան բռնության դեպքեր	23
ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՍ ԱՆՄԱՐԴԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՉԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ	30
ԱՄՓՈՓՈՒՄ	34
ԲԱԺԻՆ 2. ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏ-ՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	36
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՍՄԱՄԲ	37
Ատելության խոսքի կարգավորումները	37
Ատելության խոսքի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը և առկա իրադրությունը	40
ԼԳԲՏ հարցերի արձարծումը քաղաքական մանիպուլատիվ կոնտեքստում	43
Պետության կողմից ձեռնարկված միջոցառումները ատելության հիմքով հանցագործությունների հասցեավորման ուղղությամբ	47
ԱՄՓՈՓՈՒՄ	54
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	56
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	60

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ¹

- Բիսեքսուալ (երկսեռական)** ■ անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ
- Գեյ** ■ Նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ
- Գենդերային արտահայտում** ■ անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը
- Գենդերային ինքնություն** ■ անհատի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր
- Լեսբի** ■ Նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ
- Սեռ** ■ անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ
- Հետերոսեքսուալ (տարասեռական)** ■ անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ
- Նույնասեռական** ■ անհատ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ

¹ Սույն եզրույթների հիմնական աղբյուրը՝ «ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց օգնող մասնագետների համար», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2021 թ. <https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2021/10/specialists-guideline-2021.pdf>

Հոմոֆոբիա	■ վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և/կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ: Ներառական եզր է հաճախ ներառում է նաև տրանսֆոբան (տե՛ս ստորև):
Սեռական կողմնորոշում	■ անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ
Տրանս կամ տրանսգենդեր	■ անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից, և ներառում է տրանսսեքսուալ անցյալով կանանց և տղամարդկանց, տրանսսեքսուալ նույնականացող անձանց, տրանսգենդեր անձանց, հագուստափոխ անձանց և այլն: Հովանի եզրույթ է և ներառական է տրանսգենդեր, տրանսսեքսուալ և այլ ոչ բինար գենդերային ինքնություն ունեցող անձանց համար:
Տրանսֆոբիա	■ բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զգվանքի, վախի և/կամ ատելության վրա
ՍԿԳԻ	■ սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում
ԼԳԲՏ	■ լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր
ՉԼՄ	■ Չանգվածային լրատվության միջոց
ՄԻԵԿ	■ Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԵԱՀԿ	■ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԺՀՄԻԳ	■ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ՀՀ	■ Հայաստանի Հանրապետություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թ.-ը նշանավորվեց նախ և առաջ հետպատերազմական տրամադրություններով, երբ առաջնահերթությունները պետության ներսում շրջադարձային փոփոխություն կրեցին և մարդու իրավունքների պաշտպանության առաջնահերթությունները մղվեցին երկրորդ պլան: Այս շրջանում համացանցում էլ ավելի տարածվեց ատելություն, փոխադարձ թշնամանք ու անհանդուրժողականություն պարունակող խոսքը: Այն մի կողմից պայմանավորված էր արտաքին քաղաքական անորոշ և լարված իրավիճակով, երբ հասարակությունն ահռելի լրատվական հոսքի ու ապատեղեկատվության միջավայրում սկսեց Էմոցիոնալ կերպով արձագանքել տարբեր խոցելի հարցերին, մյուս կողմից՝ քաղաքական մանիպուլյացիաներով, որոնք կիրառվում են տարբեր խմբերի, քաղաքական ուժերի կողմից՝ հասարակության շրջանում որոշակի կանխատրամադրվածություն ստեղծելու նպատակով: Այս իրավիճակում ԼԳԲՏ համայնքը հերթական անգամ դարձել է թիրախ և մանիպուլյացիայի առարկա՝ դառնալով քաղաքական շահարկումների պատրվակ: Հետևաբար, այս ամենն իր բացասական ազդեցությունն է ունեցել հանրային տրամադրության վրա՝ էլ ավելի խոցելի դարձնելով ԼԳԲՏ անձանց:

Հանրային հարթակներում ատելության այս մթնոլորտը հատկապես թեժ էր արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում, երբ քաղաքական ուժերը որևէ միջոց չէին խնայում փոխադարձ վարկաբեկելու համար:

Սույն գեկույցում ամփոփված են 2021 թ.-ի ընթացքում «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից արձանագրված մարդու իրավունքների խախտումները, որոնք գուցարդված են եղել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ: Փաստագրված դեպքերը, իհարկե, ամբողջությամբ չեն արտացոլում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումները, քանի որ ոչ բոլոր դեպքերում են իրավախախտման զոհ դարձած անձինք դիմում իրավական պաշտպանության կամ իրավապաշտպաններին: Խտրականությունից տուժող անձինք հաճախ վստահություն չեն ունենում, որ հնարավոր է ապացուցել իրենց հանդեպ տեղի ունեցածի իրական շարժառիթները, քանի որ մի կողմից ապացուցման գործընթացը օբյեկտիվորեն պարունակում է որոշակի բարդություններ, մյուս կողմից՝ փորձը ցույց է տալիս, որ դատարանները միշտ չէ, որ կիրառում են օրենքով տրված գործիքակազմը՝ դեպքերի ամբողջական, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար: Այսպիսի պայմաններում պետական մարմինները առհասարակ որևէ ջանք չեն գործադրում ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումները որպես խտրականությամբ պայմանավորված դեպքեր վեր հանելու և փաստագրելու համար: Այս ուղղությամբ կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել՝ համագործակցելով Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի հետ. մասնավորապես, Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվել է հետազոտություն տվյալների հավաքագրման ուղղությամբ առկա բացերի շուրջ,² իսկ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում իրավակիրառ մարմինների ներկայացուցիչները վերապատրաստում են անցել

2 Collection of data on discrimination, hate crimes, and hate speech in Armenia, Council of Europe, 2019. <https://rm.coe.int/situational-analysis-armenia-eng/16809e49f1>

կողմնակալության ցուցիչների վերհանման և արձանագրման վերաբերյալ: Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են զեկույցի երկրորդ մասում:

Երկրորդ մասը, մասնավորապես, ներկայացնում է ատելության խոսքը, դրա հասկացությունը և Էությունը՝ որպես արտահայտման ազատության հնարավոր սահմանափակման հիմք: Բաժնում ներկայացված է տարվա ընթացքում հանրային հարթակներից, օրինակ՝ սոցիալական ցանցերից և լրատվամիջոցներից վերցված ատելության խոսքի տարբեր աստիճանի դրսևորումներ:

Խտրականության դեմ համապարփակ օրենսդրության ընդունման գործընթացը դուրս մղվեց կառավարության օրակարգից և փաստացի որևէ առաջընթաց չունեցավ: Մինևույն ժամանակ, Քրեական նոր օրենսգիրքը վերջապես ուղարկվեց Ազգային ժողովի քվեարկության՝ չնայած նրան, որ այն կրկին ամբողջական չէ՝ առկա խնդիրներն ու բացերը հասցեավորելու առումով և պարունակում է որոշ դրույթներ, որոնք օրենսգրքի առավել լայն և արդյունավետ կիրառման հնարավորություն են տալիս:

Չեկույցում ներկայացված է նաև 2021 թ.-ի ընթացքում տեղի ունեցած վերաբերելի օրենսդրական փոփոխությունները և պետական մարմինների քաղաքականության, թերացումների ու բացերի վերլուծությունը:

Չեկույցում տեղ գտած տեղեկատվության և կազմակերպության կողմից իրականացված վերլուծության հիման վրա մշակվել են առաջարկներ՝ ուղղված պետական մարմիններին, միջազգային կառույցներին, ՉԼՄ-ներին և Մարդու իրավունքների պաշտպանին: Առաջարկները պարբերաբար ներկայացվում են տարբեր ուղղություններով տարվող ջատագովության շրջանակներում ըստ հասցեատերերի և ըստ թեմատիկ առաջնահերթության: Առաջարկների ընդհանուր փաթեթը ներկայացված է զեկույցի վերջում:

Չեկույցի հավելվածում տեղ է գտել նաև կազմակերպության ռազմավարական դատավարությունների զարգացումների վերաբերյալ տեղեկատվություն:

ԲԱԺԻՆ 1.

**ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ**

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ

Մարդու իրավունքներն այն հիմնարար ազատություններն են, որոնցով յուրաքանչյուր անձ օժտված է իր ծննդյան պահից, և որոնք ուղեկցում են նրան իր ողջ կյանքի ընթացքում: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական պետություն, ապահովում է իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների անխափան իրացումը: Այդ կապակցությամբ պետությունը Սահմանադրությամբ և մարդու իրավունքները ճանաչող միջազգային պայմանագրերով ստանձնել է երեք հիմնական պարտավորություններ:

Պետությունը պարտավոր է հարգել մարդու իրավունքները, այսինքն՝ զերծ մնալ մարդու իրավունքների ոտնահարումներից (պետության նեգատիվ պարտականությունը): Անհատի իրավունքների խախտումներ չպետք է թույլ տրվեն պետական մարմինների, ներառյալ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների և պետական լիազորությամբ օժտված այլ անձանց կողմից:³

Պետությունն ունի նաև պոզիտիվ պարտավորություն՝ **պաշտպանելու անհատի իրավունքները երրորդ անձանց խախտումներից**: Այս պարտավորության ներքո պետությունը պետք է կանխի անհատի իրավունքների խախտումները տարբեր ֆիզիկական անձանց, կազմակերպությունների կողմից: Սա իրենից ենթադրում է նաև գործուն իրավական մեխանիզմների ստեղծում իրավունքների խախտումները արդյունավետ քննելու, խախտված իրավունքները վերականգնելու, խախտմամբ պատճառված վնասները հատուցելու ուղղությամբ:

Պետության հաջորդ պոզիտիվ պարտավորությունը **իրավունքների իրացման միջավայր ստեղծելն է**: Պետական իշխանությունը պետք է ձևավորի այնպիսի իրավական մեխանիզմներ և հասարակական միջավայր, որտեղ անձինք կկարողանան անխոչընդոտ իրացնել իրենց հիմնարար ազատությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը երկրի բարձրագույն օրենքն է՝ ՀՀ Սահմանադրությունը, որը ամրագրում է, որ մարդու իրավունքները գործում են անմիջականորեն:⁴ ՀՀ-ում մարդու իրավունքների գերակայությունը միաժամանակ ճանաչված է միջազգային պայմանագրերով և դաշնագրերով, որոնք վավերացվել են պետության կողմից: Այդպիսի միջազգային փաստաթղթերը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեն, քան երկրում գործող օրենսգրքերը, օրենքները, այլ նորմատիվ իրավական ակտերը:⁵

Խտրականությունից զերծ լինելու և օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքները սահմանված են թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ միջազգային կոնվենցիաներով:

Սահմանադրությունը արգելում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, Էթնիկ կամ սոցիալական ծագումից, հաշմանդամությունից, գենետիկական հատկանիշներից, աշխարհայացքից, սեռից, գույքային վիճակից, տարիքից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, ծնունդից կամ անձնական կամ սոցիալական

3 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723>

4 Նույն տեղում, հոդված 3, կետ 3

5 ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 5, կետ 3

բնույթի այլ հանգամանքներից:⁶

Մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր գլխավոր փաստաթղթերը և սահմանում են մարդու իրավունքների՝ առանց խտրականության իրացվելու հնարավորությունը: Դրանով ընդգծվում է անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային և արժեքավոր էությունը:⁷

Միջազգային իրավունքում խտրականությունը բնութագրվում է որպես ցանկացած բացառում, տարբերակում կամ նախապատվություն, որը հիմնված է կոնկրետ հանգամանքի կամ հատկանիշի վրա, և որը նպատակ ունի սահմանափակել անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը կամ իրացումը կամ հանգեցնում է նման սահմանափակումների:⁸ Այլ կերպ ասած՝ խտրականությունը նույնանման իրավիճակում գտնվող անհատների նկատմամբ տարբերակված վերաբերմունքն է առանց որևէ ողջամիտ կամ օբյեկտիվ հիմքի:⁹

Միջազգային իրավունքում, որպես խտրականության տեսակ՝ առանձնացվում է ուղղակի խտրականությունը, երբ անհատը տարբերակված վերաբերմունքի է արժանանում նման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ, ինչի պատճառը տվյալ անհատի որևէ անձնական, սոցիալական կամ այլ բնույթի հատկանիշն է:¹⁰ Անուղղակի խտրականությունը առերևույթ չեզոք դրույթ է, չափանիշ կամ գործելակերպ, որը կարող է որևէ խմբի անձանց համար որոշակի անշահավետ պայմաններ ստեղծել այլոց համեմատ:¹¹ Մեկ այլ տեսակ է ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է արժանանում այն անձը, ով չնայած չունի խտրականությունից պաշտպանվող հատկանիշը, սակայն կապված է այդ հատկանիշը կրող անձի հետ,¹² օրինակ՝ նրա ամուսինը, մայրը, հայրը և այլք:

Խտրականությունը պայմանավորվում է անձի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը և ներպետական օրենքները, ո՛չ միջազգային պայմանագրերի մեծ մասը ուղղակիորեն չեն նախատեսում ՍԿԳԻ-ն խտրականությունից պաշտպանվող հիմքերի մեջ: Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ խտրականությունից պաշտպանվող հիմքերի ցանկը բաց է իրավական ակտերը չեն բացառում ուղղակիորեն նախատեսված հիմքերից զատ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ, որոնք կարող են տարբերակված վերաբերմունքի թիրախ հանդիսանալ: Սա նշանակում է, որ ՍԿԳԻ-ն կարող են և պետք է դիտարկվեն որպես անձնական և սոցիալական այլ բնույթի հանգամանքներ և հավասարաչափ պաշտպանվեն խտրականությունից, ինչպես սեռը, ռասան, հաշմանդամությունը: Մարդու իրավունքների պայմանագրերի վրա գործող մարմինները բազմիցս վերահաստատել են այս պնդումը՝ սահմանելով, որ ՍԿԳԻ-ն ամբողջությամբ տեղավորվում են

6 Նույն տեղում, հոդված 29

7 Articles 1 (3) and 55 of the UN Charter, Article 7 of UDHR. Article 2, 4 (1) and 26 of ICCPR, Article 2 of ICESCR, Article 2 of CRC, Article 14 of ECHR, Protocol No. 12 of the ECHR

8 HRC, General Comment No. 18, § 7

9 ECtHR, Judgement of 23 July 1968, Case of Certain Aspects of the laws on the Use of Languages in Education in Belgium. Willis v. United Kingdom, No. 36042/97, § 48, ECtHR 2002-IV, Virabyan v. Armenia, No. 40094/05, 02/01/2013

10 Non-Discrimination in International Law A Handbook for Practitioners, 2011 Edition, p. 17-18

11 Council Directive 2000/43/EC of 29 June 2000 implementing the principle of equal treatment between persons irrespective of racial or ethnic origin, (b) point of Article 2 (2)

12 Molla Sali v. Greece [GC], 2018; Guberina v. Croatia, 2016, § 78; Škorjanec v. Croatia, 2017, § 55; Weller v. Hungary, 2009, § 37

խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում:¹³

Այսպիսով Հայաստանի Հանրապետությունը պետք է հարգի անձի՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքը: Այն պետք է պաշտպանի ԼԳԲՏ անձանց պետական մարմինների ներկայացուցիչների՝ կառավարության, ոստիկանության, քննչական մարմինների աշխատակիցների ոտնձգություններից: Հավասարության ապահովումը միայն պետական մարմինների կողմից խախտումներից զերծ մնալը չէ, ուստի պետությունը պետք է ստեղծի այնպիսի միջավայր, որ մասնավոր անձանց կողմից ևս թույլ չտրվեն ԼԳԲՏ անհատների իրավունքների ոտնահարումներ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Դեռ ավելին, նման ոտնահարումների դեպքերը պետք է պատշաճ քննության արժանանան, իսկ ոտնձգողները՝ պատժվեն:

ԼԳԲՏ անձինք Հայաստանում հաճախ ստիպված են թաքնվել հասարակությունից, թաքցնել իրենց ինքնությունը կամ բախվել այնպիսի իրավիճակների, երբ իրենց բնականոն աշխատանքը և կենսագործունեությունը խոչընդոտվում է այլոց կողմից՝ միայն իրենց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված:

«Փիւք» ՀԿ-ն 2021 թ. դեկտեմբերի 11-12-ին ԼԳԲՏ անձանց համար կազմակերպել է «Ծիածանի մութ կողմը» ճամբարը: Ծամբարին մասնակցել են 25 ԼԳԲՏ անձինք և կազմակերպության 5 աշխատակիցներ: Հանգստի գոտում ճամբարն անցկացնելու ժամանակ այդտեղ հանգստացել են նաև ՀՀ համալսարաններից մեկին կից քոլեջի աշակերտները, նրանց ծնողները և ուսուցիչները, որոնք խտրական արտահայտություններ և սպառնալիքներ են հնչեցրել ճամբարի մասնակիցների և կազմակերպության աշխատակիցների հասցեին: Նրանք, նկատելով ճամբարի մասնակիցներին, ասել են՝ «հլը սրանց նայեք», «յախք արա, սրանք ո՞վ են», «չես ջոկում տղայա, թե աղջիկ», և այլն: Ծաշի ընդմիջման ժամանակ քոլեջի ուսուցիչները, որոնք ևս գտնվել են ճաշարանում, բարձր արտահայտություններ են հնչեցրել՝ «հեսա սրանց գիշերը կծեծենք», «տե՛ս ինչ ենք անելու գիշերը սրանց»: Ուսուցիչներից կամ ծնողներից մեկն ասել է՝ «գյուղապետը իմ ընկերն ա, հեսա իրան կասեմ, էս հարցը կլուծենք»: Նրանք փորձել են կազմակերպության աշխատակիցներից մեկին կանչել պարզաբանման («ռազբոռկա»), սակայն աշխատակիցը դիմել է հյուրանոցի անվտանգության աշխատակիցներին: Վերջիններիս և հյուրանոցի ղեկավարության շնորհիվ քոլեջի աշակերտների և նրանց ուղեկցողների կողմից հնարավոր բռնությունը կանխվել է: Ծամբարի մասնակիցները ստիպված են եղել փոխել իրենց ճաշի ժամերը, որպեսզի խուսափեն բռնարարներին հանդիպելուց:

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումների ընդհանրական վերլուծություն

2021 թ. ընթացքում կազմակերպության իրավաբանական թիմի կողմից **ԼԳԲՏ անձանց տրամադրվել է 298 խորհրդատվություն և 61 ներկայացուցչություն դատական տարբեր ատյաններում:** Արձանագրվել է ԼԳԲՏ անձանց

13 Identoba and Others v. Georgia, 2015, § 96; Salgueiro da Silva Mouta v. Portugal, 1999, § 28; Fretté v. France, 2002, § 32; Vejdeland and Others v. Sweden, 2012, § 55; Committee Against Torture, General Comment No.2: Implementation of Article 2 by State parties, § 21, 22

Նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության ու արտահայտման հիմքով **խտրականությամբ զուգորդված մարդու իրավունքների խախտումների 35 դեպք:**

Որպես իրավախախտումներ են հաշվառվել.

- *Ֆիզիկական բռնության դեպքերը, այդ թվում խոշտանգում կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք ենթադրող դրսևորումները,*
- *սեռական բռնության դեպքերը,*
- *անձնական կյանքի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվության ապօրինի տարածման կամ դրա սպառնալիքի դեպքերը,*
- *շորթման դեպքերը,*
- *ընտանեկան բռնության դեպքերը, ներառյալ՝ ընտանիքի անդամների կողմից ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական բռնության, ազատության սահմանափակման դեպքերը:*

Իրավախախտումների հետևանքով ոտնահարվել են տուժածների՝ խոշտանգումներից, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի, խտրականությունից զերծ լինելու իրավունքները:

Հարկ է նշել, որ արձանագրված են իրավախախտումների միայն ան դեպքերը, երբ իրավախախտի մոտիվացիան պայմանավորված է եղել տուժողների սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Որպես այդպիսին են դիտարկվել նաև այն դեպքերը, երբ տուժողի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը ենթադրվել են իրավախախտների կողմից՝ ելնելով վերջինիս՝ ԼԳԲՏ համայնքի վերաբերյալ պատկերացումներից:

Արձանագրված դեպքերի մեջ մեծ թիվ են կազմում ընտանեկան բռնության դեպքերը: Մասնավորապես, արձանագրված 35 դեպքերից 17-ը ընտանեկան բռնության դեպքեր են: ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները, տեղեկանալով նրանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին, նրանց ծեծել են, վիրավորել և հայհոյել, սպառնացել, բռնություն գործադրել, փորձել են «բուժել»:

Պետք է նշել, որ չնայած ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումները հանդիպում են տարբեր ոլորտներում, ԼԳԲՏ անձինք խուսափում են դիմել իրավապահ մարմիններին իրենց իրավունքների պաշտպանության խնդրով: Հատկանշական է, որ արձանագրված 35 դեպքերից, տուժողներից միայն 10-ն են դիմել իրավապահ մարմիններին:

Ոստիկանություն կամ այլ մարմին դիմումներ և հաղորդումներ ներկայացնելուց խուսափելը՝ ԼԳԲՏ անձինք բացատրում են մի քանի հիմնական պատճառներով.

- *չեն վստահում իրավապահ մարմիններին, մասնավորապես, ոստիկանության աշխատակիցներին, կարծում են՝ իրենց գործերը քննվում են ոչ օբյեկտիվորեն՝ պայմանավորված իրենց նկատմամբ կողմնակալ վերաբերմունքով,*
- *արդյունավետ չեն համարում իրավական պաշտպանության մեխանիզմները. կարծում են, որ իրավունքների վերականգնումը երկար է տևում և կարող է*

ձգձգվել տարիներով և, ի վերջո, որևէ արդյունք չտալ,

- մտավախություն ունեն, որ իրենց նկատմամբ իրականացված հանցագործության, իրենց կողմնորոշման և ինքնության մասին տվյալները կհանրայնացվեն իրավապահ մարմինների կողմից,
- իրենց պաշտպանված չեն զգում հանցավորներից և վախենում են նրանց հաշվեհարդարից. այսպիսի մտահոգություն առկա է նաև ընտանեկան բռնության դեպքերում, քանի որ տուժողները ստիպված են շարունակել բնակվել բռնարարների հետ նույն տանը, և չկա որևէ արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմ, որը կպաշտպանի ընտանեկան բռնության գոհերին,
- ընտանեկան բռնության գոհերը հաճախ խուսափում են իրենց ընտանիքի անդամների դեմ հաղորդում ներկայացնելուց:

Լինում են նաև դեպքեր, երբ տուժածները փորձում են ինքնուրույն վերականգնել իրենց խախտված իրավունքները, օրինակ՝ ընդհանուր հայտարարի գալ իրավախախտի հետ, որպեսզի բռնությունը չկրկնվի:

Պետք է նշել, որ բարձրաձայնված մտավախությունները հիմնված են փորձի վրա. ԼԳԲՏ անձինք խտրականության են ենթարկվում ոստիկանության աշխատակիցների կողմից, նրանց անձնական տվյալները բացահայտվում են այլ աշխատակիցներին, ինչպես նաև դիմողների ընտանիքի անդամներին: Տուժողները ծաղրի կամ անհարգալից վերաբերմունքի են արժանանում հատկապես այն դեպքում, երբ իրավապահ մարմիններին են դիմում մինչև փաստաբանի աջակցություն ստանալը և նմանատիպ վերաբերմունքից հետո այնպիսի հոգեվիճակում են լինում, որ անգամ փաստաբանի ներկայությամբ չեն ցանկանում կրկին առնչվել այդ մարմինների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնասեռական, երկսեռական և տրանս անձինք քրեական օրենսգրքով արգելված արարքների զոհ են դառնում իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, ակնկալվում է, որ իրավապահ մարմինները ոչ միայն պետք է պատշաճ կերպով հաղորդում ընդունեն հանցագործության մասին, այլ նաև ցուցաբերեն հատուկ մոտեցում: Պետք է գնահատեն տուժողի անհատական կարիքները, ցուցաբերեն զգայուն մոտեցում և, ըստ անհրաժեշտության, առաջարկեն նաև այլ աջակցություն, ինչպիսին է, օրինակ՝ հոգեբանական և/կամ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին:

Խտրականությամբ զուգորդված իրավախախտումների դեմ բողոքները մեծ-մասամբ ընթացք չեն ստանում. քրեական գործերը կարճվում են կամ գործի քննությունն անհիմն ձգձգվում է՝ հանգեցնելով տուժողի հիասթափության, երբեմն նաև տուժողի կողմից բողոքից հրաժարվելուն: Վերոնշյալը հիմնավորվում է նաև 2021 թ. վիճակագրությամբ. արձանագրված դեպքերից ընդամենը մեկով է, որ գործը մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել:

Կազմակերպության կողմից արձանագրված դեպքերը ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը թերացել է՝ ԼԳԲՏ անձանց խտրականությունից պաշտպանելու իր պարտականությունները կատարելու գործում: ԼԳԲՏ անձանց իրավունքները խախտվել են թե՛ պետական մարմինների և թե՛ մասնավոր անձանց կողմից, իսկ խախտված իրավունքները հնարավոր չի եղել վերականգնել օրենսդրական բացերի և իրավակիրառ մարմինների կողմնակալ վերաբեր-

մուկքի պատճառով:

Սույն զեկույցում ներառված ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավախախտումները հանդիսանում են ՍԿԳԻ-ի հիմքով խտրականությունից զերծ լինելու իրավունքի ոտնահարման դեպքեր՝ զուգորդված մարդու իրավունքների այլ տեսակների ոտնահարմամբ: Այդ իրավախախտումների արձանագրումը և դիտարկումն ունի նույնական կարևորություն՝ առանց որևէ մեկի գերակայության: Չեկույցի բաժիններում ներկայացված դեպքերը խմբավորված են՝ մարդու իրավունքների խախտումների որոշ տեսակները մատնանշելու ու շեշտադրելու համար: Հասկանալի է, որ դեպքերից յուրաքանչյուրը հանդիսանում է մեկից ավել մարդու իրավունքների ոտնահարում՝ չնայած զեկույցում կարող է ներկայացված լինել մարդու իրավունքների խախտումների բաժիններից մեկում:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 31

Յուրաքանչյուր անձ ունի մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:¹⁴ Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:¹⁵ «Անձնական կյանքը» լայն հասկացություն է. ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:¹⁶ Այն ներառում է նաև պետության պարտականությունը՝ ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը¹⁷ որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

Անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը պաշտպանվում է նաև մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի ներքո:¹⁸ Անձի մարմինը համարվում է իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչը:¹⁹

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը:²⁰

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում

14 ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31

15 International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 16

16 Pretty v. The United Kingdom, No. 2346/02, §49

17 ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16, հոդվածներ 16 և 17

18 ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 31, European Convention on Human Rights, Article 8

19 Y.F. v. Turkey, No. 24209/94 ECtHR Judgement

20 Connors v. The United Kingdom, No. 66746/01, ECtHR Judgement

դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ որոշ դեպքերում ՄԻԵԿ-ի 2-րդ կամ 3-րդ հոդվածների, մյուս դեպքերում՝ 8-րդ հոդվածի (առանձին կամ 3-րդ հոդվածի համակցությամբ) ներքո՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր անձանց կողմից բռնի գործողություններից:²¹

ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքով:²² Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական ներգործության հանցանքների համար: Սույն բաժնում որպես մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում դիտարկվել են անձանց ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության նկատմամբ միջամտությունները: Մասնավորապես, ամփոփվել են ֆիզիկական բռնության, սեռական բռնության, շորթման, անձնական գաղտնիք հանդիսացող տվյալների տարածման կամ դրա սպառնալիքի դեպքերը, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերը, որոնք դրսևորվել են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական և տնտեսական բռնության ձևով: Նկարագրված դեպքերից որոշներում իրավախախտը հանդիսանում է վարչական մարմինը, որը, որպես պետության ներկայացուցիչ ձախողել է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի պարտավորությունը: Մյուս դեպքերում հանցավորները և/կամ իրավախախտները մասնավոր անձինք են, որոնք գործել են պետության թողտվության արդյունքում ձևավորված անպատժելիության մթնոլորտում: Իրավակիրառ մարմինների կողմից ԼԳԲՏ անձանց պատշաճ պաշտպանություն տրամադրելու անկարողությունը հանգեցրել է մի իրավիճակի, երբ անձինք կատարում են ընդհուպ մինչև քրեական օրենսգրքով արգելված արարքներ, սակայն դրա համար պատասխանատվության չեն կանչվում: Հետևաբար, այստեղ դիտարկվել են նաև պետության՝ մարդու իրավունքները երրորդ անձի ոտնձգությունից պաշտպանելու պարտավորության խախտումները:

Ֆիզիկական բռնության դեպքեր

Տուժողի նկատմամբ բռնություններն ու ճնշումները հաճախ անտեսվում կամ խրախուսվում են հասարակության կողմից: Հասարակական բացասական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ տարածվում է նաև այնպիսի հաստատություններում, որոնք պարտավոր են ինչ-որ չափով զբաղվել անձանց դաստիարակությամբ և կարծիքի ձևավորմամբ: Արդյունքում, անգամ այս հաստատություններն են ձախողում ոչ միայն անձանց դաստիարակության, այլ նաև իրենց պաշտպանության ներքո գտնվողների պաշտպանության հարցում: Խնդիրն առավել տեսանելի է դպրոցներում, որտեղ տուժողներն անչափահաս անձինք են: Անչափահաս ԼԳԲՏ անձանց նկատմամբ բռնությունը հանգեցնում է

21 Osman v. the United Kingdom, §§ 128-130; Bevacqua and S. v. Bulgaria, § 65; Sandra Janković v. Croatia, § 45; A v. Croatia, § 60; Đorđević v. Croatia, §§ 141-143; Söderman v. Sweden [GC], § 80

22 ՀՀ քրեական օրենսգրքը, գլուխ 16. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149259>

հոգեբանական ճնշվածության և իրենց ինքնության մերժման: Միևնույն ժամանակ, եթե այլ հիմքով բռնության և ճնշումների ենթարկվող անչափահաս անձինք կարող են ստանալ մանկավարժների կամ իրենց ծնողների աջակցությունը, ապա ԼԳԲՏ անձանց պարագայում բռնությունը և դրա արդարացումը կարող են շարունակվել անգամ այդ անձանց կողմից: Այս մասին են վկայում հաջորդիվ ներկայացված բազմաթիվ ընտանեկան բռնության դեպքերը: Բացի այդ, անչափահաս տուժողները միշտ չէ, որ իրավապաշտպան մարմիններին դիմելու հասանելիություն ունեն, իսկ դիմելու պարագայում հանդիպում են այնպիսի օրենսդրական խոչընդոտների, ինչպիսիք են՝ օրինական ներկայացուցիչների ներգրավումը գործի քննությանը: Այսպիսով, իրավական պաշտպանության մեխանիզմները ևս դժվարամատչելի են դառնում անչափահասների համար:

Դիմողը անչափահաս տղա է, որը բնակվում է ՀՀ մարզերից մեկում: Նա ունի իր համաքաղաքացիների ընկալմամբ տարբերվող արտաքին (երկար մազեր, տարբերվող դիմագծեր): Արտաքինի պատճառով երեխան բուլինգի է ենթարկվում դպրոցում: Համադասարանցիները խանգարում են նրան մասնակցել դասապրոցեսին, գրիչներ և թղթեր են նետում նրա վրա: Ուսուցիչները մեծամասամբ չեն խառնվում ասելով, որ այդ տարիքում երեխաները միշտ են անկարգ:

Համադասարանցիները պարբերաբար վիրավորում են նրան՝ նշելով՝ «ոնց որ գոմիկ լինես, բոմժի նման ես, աղջկա նման ես, ոնց որ աղջիկ լինես, տղայական բան չկա մեջդ»: Եղել են նաև ֆիզիկական բռնության դեպքեր դասասենյակում, դպրոցի հարակից շենքերում, դպրոցի զուգարանում: Նրան աղջիկների զուգարան են մտցրել, փորձել ֆիզիկական բռնություն գործադրել:

Դիմողը բուլինգի պատճառով միշտ նույն սև հագուստն է կրում, փորձում է չտարբերվել: Դիմողը նշում է, որ բուլինգն ազդում է իր վրա, հաց չի ուտում: Նա խուսափում է բռնությունների մասին հայտնել ուսուցիչներին՝ մտածելով, որ դա «թույլ» մարդու պահվածք է:

2021 թ. մայիսին դիմողը և նրա ընկերը գտնվել են ուսումնական հաստատության շենքում, երբ նկատել են, որ մի խումբ 13-15 տարեկան տղաներ փորձում են իրենց ներքաշել կռվի մեջ: Այդ ընթացքում նշված տղաները դիմողին հարցրել են՝ «դու տղա՞ ես, թե՞ աղջիկ ես. ի՞նչ ես», և այլ կերպ վիրավորել են դիմողին: Դիմողը, կռվից խուսափելու համար, դիմել է կրթահամալիրի ավագ դպրոցի տնօրենին, որը որևէ քայլ չի ձեռնարկել, դեռ ավելին՝ դիմողին մեղադրել է կռիվ հրահրելու մեջ՝ ակնհայտորեն ասելով, որ «իր նման» (նկատի ունենալով տարբերվող արտաքինով, նույնասեռական ընկալվող) մեկ այլ անձի նկատմամբ դպրոցի տղաները նման քայլեր չեն անում:

Դրանից հետո տղաների խումբը հրմշտել է դիմողին. նրա մեջքին հասցրել են մոտ 4 հարված: Դիմողը այդ մասին հայտնել է միջին դպրոցի տնօրենին, որը ևս որևէ քայլ չի ձեռնարկել միջադեպի մեղավորներին կանգնեցնելու համար: Այնուհետև դպրոցի տնօրինությունը կապ է հաստատել դիմողի մոր հետ, որը պահանջել է, որ ապահովեն իր որդու անվտանգությունը, ինչից հետո դպրոցի տնօրինությունը տաքսի է պատվիրել դիմողի համար, որպեսզի նրան հեռացնի դպրոցի տարածքից և տուն հասցնի:

Կան բազմաթիվ են դեպքեր, երբ տրանս անձինք ֆիզիկական բռնության են ենթարկվում փողոցում անձանոթ անձանց կողմից, որոնք տուժողների գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկանում են կամ նրանց արտաքինից կամ այն վայրից, որտեղ նրանք գտնվում են: Այս պարագայում ակնհայտ է, որ հանցավորների գործողությունները ուղղված են ոչ թե անհատների դեմ պայմանավորված անձնական որևէ խնդրով, այլ ուղղված է տվյալ համայնքի դեմ նրանց նկատմամբ ատելության և անհանդուրժողականության պատճառով: Տարիներ շարունակ տրանս անձանց նկատմամբ բռնությունների դեպքերը արձանագրվել և գեկուցվել են հասարակական կազմակերպությունների կողմից: Տուժողները հաճախ դիմել են տարածքում ծառայություն իրականացնող իրավապահ մարմիններին: Սակայն պետությունը, տրանս անձանց անվտանգությունը և պաշտպանությունը ապահովելու համար, այդպես էլ որևէ միջոց չի ձեռնարկել: Իրավապահ մարմինների ներկայացված հաղորդումները անտեսվել են կամ դրանց քննությունը այնքան է ձգվել, որ տուժողները հրաժարվել են բողոքից: Եղել են անգամ դեպքեր, երբ տուժողները մեղադրվել են իրականությանը չհամապատասխանող արարքներում և արդյունքում հայտնվել են մեղադրյալի աթոռին: Անպատժելիության այս մթնոլորտում հանցագործությունները չեն դադարում, իրավախախտները մնում են անպատիժ, իսկ ԼԳԲՏ անձինք էլ ավելի են կորցնում վստահությունն իրավապահ համակարգի նկատմամբ: Կարող ենք եզրակացնել, որ պետությունը մի կողմից ձախողում է ԼԳԲՏ անձանց պաշտպանելու, իսկ մյուս կողմից՝ կյանքի ապահով միջավայր ստեղծելու իր պարտավորությունը: Արդյունքում, ԼԳԲՏ անձինք իրենց ապահով չեն զգում անգամ հանրային վայրերում:

Բռնությունների զոհ են դառնում նաև սեռական ծառայություններ մատուցող տրանս անձինք, որոնք կրկնակի խոցելի են ոչ միայն իրենց գենդերային ինքնության, այլ նաև իրենց գործունեության պատճառով: Հանցավորները, գիտակցելով, որ տրանսգենդեր անձինք առավել խոցելի և անպաշտպան են, բռնություն են գործադրում նրանց նկատմամբ: Այս կերպ նրանք հաճախ փորձում են ցույց տալ իրենց գերակա և արտոնյալ դիրքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ արարքն ուղղված է ոչ թե անհատի, այլ համայնքի դեմ:

■ Տուժողը տրանս կին է, ով սեռական ծառայություններ է մատուցում: 2021 թ. դեկտեմբերի 15-ին տուժողը իր հաճախորդի հետ գտնվել է իր բնակարանում: Հաճախորդը տուժողի ներկայությամբ ներերակային եղանակով թմրանյութեր է օգտագործել, այնուհետև տուժողից պահանջել է իր հետ առանց պահպանակի սեռական հարաբերություն ունենալ: Տուժողը հրաժարվել է, ինչից հետո հաճախորդը փորձել է իր ներարկիչով բռնի ներարկում անել տուժողի վզից: Տուժողը բռնել է բռնարարի ձեռքից և թույլ չի տվել: Դրանից հետո հաճախորդը հափշտակել է սենյակում դրված 50.000 դրամը և փախուստի դիմել:

■ Տրանս կինը պարբերաբար գնումներ է կատարել նույն սուպերմարկետից: Նա նկատել է, որ աշխատակիցները բացասաբար են տրամադրված իր նկատմամբ, մասնավորապես, բամբասում են իր մասին, վատ հայացքներ են նետում իր վրա: Սեպտեմբերի ամսին՝ նույն սուպերմարկետի մուտքի մոտ, մի

երիտասարդ, որը ենթադրաբար սուլպերմարկետի աշխատակիցներից է, թքել է նրա ոտքերի տակ: Երբ դիմողը փորձել է պարզել պատճառը, անձը 2 անգամ հարվածել է դիմողի դեմքին:

2021 թ. հուլիսին տրանս կինը քայլելիս է եղել Երևանի կենտրոնում, երբ երկու անձանոթ տղամարդ հեզնական արտահայտություններ (ռեպլիկներ) են արձակել նրա հասցեին, մասնավորապես ասել են՝ «հլը սրա հագածը նայի», «գոմիկ ա» և այլն, այնուհետև մոտեցել և հարվածել են կնոջը: Դիմողը կարողացել է փախչել նրանցից, մոտեցել է տվյալ տարածքում ծառայություն իրականացնող պարեկային ծառայության աշխատակիցներին, խնդրել օգնել իրեն և բռնել հանցավորներին, սակայն ծառայողները ծիծաղել են նրա վրա և հայտնել, որ իրենք այդ հարցով չեն զբաղվում:

Տրանս կնոջ հարևանությամբ բնակվող անձն իր հյուրերի հետ գիշերային ժամերին պարբերաբար խաթարել է նրա հանգիստը՝ բարձր խոսելով, գոռալով, հայհոյելով, պատերին հարվածելով: Մի օր այդ անձինք առանց դիմողի թույլտվության մտել են նրա բնակարան, հայհոյել և վիրավորել, սպառնացել սպանել նրան, ինչպես նաև հարվածել մի քանի անգամ: Դիմողի բողոքի հիման վրա քրեական գործ է հարուցվել անձին ծեծի ենթարկելու և ապօրինի բնակարան մուտք գործելու համար, սակայն այն հետագայում կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով՝ չնայած գործում առկա բազմաթիվ ապացույցների:

2021 թ. փետրվարին՝ գիշերային ժամի, տրանս կինը գտնվել է սեռական ծառայություն տրամադրող տրանս անձանց հավաքատեղի համարվող վայրում: Նա քայլելիս է եղել, երբ նրա վրա հարձակվել են 3-4 տղամարդ և սկսել հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր հատվածներին: Դիմողը հազիվ է կարողացել փախչել այդտեղից: Բռնության հետևանքով նա ստացել է մարմնական վնասվածքներ, կոտրվել է ատամբը:

2021 թ. մարտին 2 տրանս կանայք գտնվել են փողոցում, երբ նրանց են մոտեցել 2 տղամարդ: Տղամարդիկ կրել են բժշկական դիմակներ և գլխարկներ, որոնցով փորձել են հնարավորինս թաքցնել իրենց դեմքը: Տղամարդիկ փորձել են զրուցել կանանց հետ, սակայն վերջիններս նրանց վրայից ակոհողի հոտ են զգացել, փորձել են որպես զբոսաշրջիկ ձևանալ և անգլերենով ասել են, որ ոստիկանություն կկանչեն: Տղամարդիկ դրանից ագրեսիվացել են, հայհոյել նրանց և փորձել խլել են կանանցից մեկի ձեռքին եղած պայուսակը: Կանայք փախել են և մտել մոտակա հյուրանոց: Տղամարդկանցից մեկը նրանց հետևից մտել է հյուրանոց և ամբողջ տարածքով վազել նրանց հետևից: Տղամարդկանցից մյուսը սպասել է հյուրանոցի դռան մոտ: Հյուրանոցի աշխատակիցներից մեկը փորձել է կանգնեցնել տղամարդուն, սակայն վերջինս ասել է՝ «թողեք, պիտի խփեմ, կծակեմ, կմոռթեմ»՝ նկատի ունենալով տրանս կանանց: Տղամարդը նաև սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել:

Հյուրանոցի աշխատակիցները պահանջել են տրանս անձանցից դուրս գալ

հյուրանոցից: Նրանք վախեցած դուրս են փախել: Նրանցից մեկը, առանց շուրջը նայելու, վազելով անցել է փողոցը, որտեղ գրեթե վրաերթի է ենթարկվել:

Կանանցից մեկը վազելիս լսել է, թե ինչպես է իր հետևից վազող տղամարդը բացել ծալովի դանակը և պահանջել տալ իր պայուսակը: Կինը, վախենալով կյանքի համար, պայուսակը մի կողմ է նետել և փախել: Ըստ տուժածների՝ պայուսակի մեջ եղել է 150.000 ՀՀ դրամ և իրենց վարձակալած տան բանալին: Նրանք պատասպարվել են մոտակա խանութում, ինչից հետո ոստիկանություն են կանչել:

Սեռական բռնություն

Դիմողը նույնականանում է որպես տրանս անձ: Նա, 2020 թ.-ին առողջական խնդիրները լուծելու նպատակով, այցելել է ժողովրդական բուժակի՝ հեքիմի տուն: Տղամարդ բուժակը, տեղյակ լինելով դիմողի գենդերային ինքնության մասին, սեռական բնույթի անպարկեշտ առաջարկություններ է արել, ցույց է տվել իր սեռական օրգանը, սեռական բնույթի հպումներ է կատարել դիմողի նկատմամբ:



Այս իրավիճակում ևս հանցավորի կողմից օգտագործվել է տուժողի խոցելի կարգավիճակը. մասնավորապես, հանցավորը համոզված է եղել, որ անձը չի դիմի իրավական պաշտպանության որևէ միջոցի, քանի որ այդ դեպքում ստիպված կլինի բացահայտել իր գենդերային ինքնությունը:

Շորթում

2020 թ. աշնանը դիմողը՝ արական սեռի անձը, սեռական հարաբերություն է ունեցել նույնասեռական անձի հետ: Որոշ ժամանակ անց նույնասեռական անձը զանգահարել է դիմողին և պահանջել իրեն վճարել ընդհանուր 800.000 ՀՀ դրամ գումար՝ տեղի ունեցած սեռական հարաբերություն մասին նրա ընտանիքին չհայտնելու դիմաց: Նույնասեռական անձը նաև նշել է, որ սեռական հարաբերության հետևանքով սեռավարակ է ձեռք բերել, ինչի բուժման համար էլ ուզում է այդ գումարը: Երբ դիմողը փոխել է հեռախոսահամարը և փորձել խզել կապը հանցավորի հետ, վերջինս զանգահարել է նրա ընտանիքի անդամին և պահանջել, որ դիմողը կապ հաստատի իր հետ: 2020 թ. հոկտեմբերին դիմողը ստիպված է եղել այդ գումարը մաս-մաս վճարել: 2021 թ. փետրվարին հանցավորը կրկին կապ է հաստատել դիմողի հետ և այս անգամ պահանջել ևս 350.000 ՀՀ դրամ: Դիմողը նշում է, որ ինքը ամուսնացած է, ունի երեխաներ, ուստի չի կարող թույլ տալ, որ այդ տեղեկատվությունը հայտնի դառնա իր ընտանիքին: Միաժամանակ, նա չի կարող վճարել պահանջված գումարը, քանի որ չունի այդքան գումար, իսկ նախորդ 800.000 դրամը վճարելու համար ստիպված է եղել պարտքեր կուտակել:

ԼԳՏՏ անձանց նկատմամբ շորթման դեպքերը բավականին տարածված երևույթ են. այսպիսիք արձանագրվել են նաև նախորդ տարիների ընթացքում: Այս դեպքերում հանցավորները օգտագործում են տուժողի անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն, վստահ են լինում, որ վերջինս կվախենա այդ տեղեկատվությունը հրապարակելուց և չի դիմի իրավական պաշտպանության մեխանիզմների: Անպատժելիության մթնոլորտում, երբ իրավապահ մարմինները երբեմն իրենք են հանդիսանում անձնական գաղտնիք հանդիսացող տվյալների տարածող, հանցավորների համար տուժողներին ճնշելու Էլ ավելի բարենպաստ միջավայր է ստեղծվում:

Ծառայությունների տրամադրումից հրաժարում

Մասնավոր անձանց կողմից խտրականությունն արգելող արդյունավետ օրենսդրական կարգավորումների բացակայությունը հանգեցնում է խտրականությամբ պայմանավորված իրավախախտումների, երբ սպասարկման ոլորտի ներկայացուցիչները հրաժարվում են ԼԳՏՏ անձանց ծառայություն տրամադրել՝ իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով: Սահմանադրությամբ խտրականության արգելքը իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմ դեռևս չի համարվում, քանի որ դատարանները Սահմանադրական դրույթների անմիջական կիրառման հարցում բազմիցս ձախողել են:

2021 թ. մարտին 2 տրանս կին մտել են մթերային խանութ՝ գնումներ կատարելու համար: Աջխատակիցը նրանց հայտնել է, որ խանութը փակ է, և չի սպասարկել նրանց: Մինչդեռ խանութում այլ գնորդ է եղել, որն այդ պահին սպասարկվում էր:

Եվս մեկ տրանս կին նույն խանութում մոտեցել է գանձապահին՝ վերցրած մթերքի համար վճարելու համար, սակայն նրան հայտնել են, որ չեն սպասարկում:

2021 թ. հունվարին 3 անձ՝ 2 տղամարդ և 1 կին, գրկախառնված նստել են փաբում: Նրանց է մոտեցել փաբի մենեջերը, հաշիվը շարտել է սեղանին և ագրեսիվ տոնով պահանջել, որ վճարեն և դուրս գան փաբից: Փաբից դուրս գալուց հետո մենեջերը հայտնել է, որ իրենք չեն ուզում գեյ հաճախորդ ունենալ, որ նրանք անհանգստացնում են մյուս հաճախորդներին և որ այլևս չայցելեն այդ փաբ:

Անձնական տվյալների տարածում կամ դրա սպառնալիք

2021 թ. ապրիլի վերջին դիմողը գտնվել է զինվորական հոսպիտալում: Այնտեղ գտնվող մեկ այլ զինվոր խնդրել է դիմողի հեռախոսը, այն ստանալուց հետո առանց դիմողի համաձայնության ուսումնասիրել է նրա անձնական տեսանյութերը, որտեղ գտել է դիմողի նույնասեռ հարաբերության մասին տեսանյութեր: Չինվորը սպառնացել է դիմողին, որ կտարածի դիմողի սեռական կողմնորոշման մասին տեղեկությունները, հայտնել է, որ ինքը ներբեռնել է այդ տեսանյութերը, և դրանք իր տրամադրության տակ են: Հոսպիտալից դուրս գալու վերջին օրը զինվորը տարածել է դիմողի սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը հոսպիտալում գտնվող այլ զինվորների և բժիշկների շրջանում: Հոսպիտալում են եղել դիմողի զորամասի այլ ծառայակիցներ: Դիմողը վախեցել է, որ իր կողմնորոշման մասին տեղեկատվությունը հայտնի կդառնա իր զորամասում, և ինքը կենթարկվի խտրականության և ճնշումների: Չորամաս վերադառնալուց մի քանի օր անց դիմողի հետ իր տրամադրած հեռախոսահամարով կապ հաստատել չի հաջողվել:

2021 թ. ամռանը նույնասեռական տղամարդը, հայտնելով իր սեռական կողմնորոշման մասին, զինվորական ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել: Որոշ ժամանակ անց դիմողի տատը, որն աշխատում է դիմողի բնակության վայրի մարզային զինվորական կոմիսարիատում, դիմողին հայտնել է, որ ինքը տեղյակ է՝ ինչ հիմքով է դիմողը ոչ պիտանի ճանաչվել ծառայության համար: Դիմողը նշում է, որ իր տատին այդ մասին հայտնել են զինկոմիսարիատի աշխատակիցները, և կասկածում է, որ դա արել է հանձնաժողովի անդամներից մեկը:

Դիմողի տատը դիմողի կողմնորոշման մասին տեղեկացրել է նրա ընտանիքի անդամներին, ինչից հետո դիմողի մայրը պահանջել է դիմողից ժխտել իր նույնասեռական լինելու հանգամանքը և գնալ ծառայության:

2021 թ. հունիսին սեռական ծառայություն մատուցող 2 տրանս կանայք գտնվել են սեռական ծառայություն տրամադրող տրանս անձանց հավաքատեղի համարվող վայրում: Նրանց է մոտեցել ծանոթ անձ, պահանջել, որ հեռանան այդտեղից, բացի այդ՝ տուժածներից մեկին սպառնացել է «բերել նրա հորը և կանգնացնել նրա դիմաց»՝ դրանով ցանկանալով անձի հորը բացահայտել տուժածի գենդերային ինքնությունը և այն հանգամանքը, որ նա սեռական ծառայություն է մատուցում: Իրավախախտը սպառնացել է նաև, որ տուժածների հարևաններին կտեղեկացնի նրանց գենդերային ինքնության մասին, և վերջիններս նրանց կստիպեն հեռանալ վարձակալած բնակարանից:



Նկարագրված իրավիճակներից մեկում անձի մասնավոր կյանքին վերաբերող տվյալների տարածողը պետական մարմնի՝ զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչ է, ինչը նշանակում է, որ պետության կողմից ուղղակիորեն տեղի է ունեցել մարդու իրավունքները հարգելու պարտավորության խախտում:

Մյուս դեպքերում պետությունը ձախողել է ստեղծել ապահով միջավայր LGBS

անձանց համար, երբ անձանց նկատմամբ ճնշում գործադրելը հնարավոր չէր լինի իրենց մասնավոր կյանքին վերաբերող տվյալներ տարածելու կամ դրա սպառնալիքի միջոցով: Այս պարագայում ԼԳԲՏ անձինք ոչ միայն վախենում են իրենց սեռական կողմնորոշմանը վերաբերող տվյալների տարածման համար, այլ նաև չեն տեսնում իրավական պաշտպանության որևէ արդյունավետ միջոց՝ երրորդ անձանց ոտնձգություններից պաշտպանվելու համար: Այսինքն, պետության կողմից անմիջականորեն անձի անձնական տվյալների տարածումը ստեղծում է անպատժելիության և անապահովության մթնոլորտ: Բնական է, որ անձինք, որոնք ուղղակիորեն տուժել են պետական մարմինների գործողությունների արդյունքում, չեն կարող վերջիններիս տեսնել որպես իրենց իրավունքները այլոցից պաշտպանող մեխանիզմ:

Ընտանեկան բռնության դեպքեր

2017 թ. ՀՀ-ում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (այսուհետ՝ Ընտանիքում բռնության կանխարգելման մասին օրենք): Թվում էր, թե դրա գործարկումից հետո ԼԳԲՏ անձինք իրենց ընտանիքներում ավելի պաշտպանված կլինեն, բայց իրականում մինչ օրս շատ անձինք դիմում են «Փինք» ՀԿ-ին՝ ընտանիքում բռնության ենթարկվելու խնդրով:

Ներպետական օրենսդրության կարգավորումներն ընտանեկան բռնության դեպքերում նախատեսում են հանցագործության մասին առանձին հաղորդման ներկայացում մասնավոր բողոքի գործերի դեպքում,²³ եթե ընտանիքում բռնության ենթարկված անձը ցանկանում է նաև, որ իր նկատմամբ գործադրված բռնությունը քննվի ոչ միայն ընտանեկան բռնության շրջանակներում, այլ նաև որպես առանձին հանցագործություն, իսկ իրավախախտը կրի քրեական օրենսդրությամբ նախատեսված պատիժը: Նման հաղորդում չներկայացնելու դեպքում բռնարարի նկատմամբ կիրառվում են միայն «Ընտանիքում» բռնության կանխարգելման մասին օրենքում նախատեսված սահմանափակումները: Բացառություն են կազմում ընտանեկան բռնության այն դեպքերը, երբ տուժողը չի կարող ինքնուրույն պաշտպանել իր իրավունքները՝ ելնելով իր անօգնական վիճակից կամ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստից:²⁴ Իսկ հանրային մեղադրանքի գործերով, օրինակ՝ անձին ապօրինի ազատությունից զրկելու դեպքով, իրավապահ մարմինները պարտավոր են քննություն իրականացնել՝ անկախ տուժողի բողոքի ամկայությունից:

2021 թ. ընթացքում կազմակերպության կողմից արձանագրվել է ընտանիքում բռնության 17 դեպք: Որոշ դեպքերում, եթե անձին որոշակի հոգեկան և ֆիզիկական տառապանք է պատճառվել, որը պարբերական բնույթ է կրում, կարող է միաժամանակ ոտնահարվել նրա ոչ միայն մասնավոր, ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այլև՝ անմարդկային, արժանապատվությունը

23 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 183, մաս 1-ին. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=150102>

24 Նույն տեղում, հոդված 183, մաս 4-րդ

Նվաստացնող վերաբերմունքից գերծ մնալու իրավունքը:

Դիմողները հայտնել են ընտանիքում բռնության տարբեր տեսակների մասին՝ ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական: Այս տեսակները մեծամասամբ համակցվել են. ֆիզիկականը՝ հոգեբանականի հետ, հոգեբանականը՝ տնտեսականի հետ:

Որոշ դեպքերում ընտանեկան բռնության պատճառ է դարձել երրորդ անձանց կողմից տուժողի անձնական կյանքին վերաբերող տվյալների բացահայտումը:

Արձանագրված դեպքերում ԼԳԲՏ անձանց ընտանիքի անդամները տարբեր միջոցներով են փորձել «փոխել» անձանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը. Նրանց փակի տակ են պահել, զրկել են կապի միջոցներին, կրթական հաստատություններ այցելելուց, ֆինանսական միջոցներից, վիրավորել են, հոգեբանական ճնշում գործադրել, ստիպել են տուժողներին դիմել բժշկի կամ հոգեբան մասնագետի՝ փոխելու նրանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Սույն պրակտիկաները հայտնի են որպես կոնվերսիոն պրակտիկայի կամ կոնվերսիոն թերապիայի դեպքեր:²⁵

Դիմողը նույնասեռական տղամարդ է: Նրա ընկերներից մեկն իրենց անձնական նամակագրությունը ցույց է տվել դիմողի ծնողներին՝ դրանով բացահայտելով նրա նույնասեռ կողմնորոշումը: Դրանից հետո ընտանիքի անդամները վիճաբանել են դիմողի հետ, ինչի ընթացքում դիմողի հասցեին հնչեցրել են վիրավորական արտահայտություններ, որոնք դիմողը անգամ ամաչում է բարձրաձայնել: Այնուհետև դիմողին փորձել են փակի տակ պահել տանը՝ թույլ չտալով դուրս գալ և շփվել ընկերների հետ, գնալ համալսարան: Որոշ ժամանակ անց ընտանիքի անդամները մեղմացրել են սահմանափակումները, սակայն վերահսկողություն են իրականացրել դիմողի կյանքի նկատմամբ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար՝ դիմողը փախել է տնից և տեղափոխվել քրոջ տուն: Սակայն, երբ ընտանիքի անդամները տեղեկացել են, որ նա բնակվում է քրոջ տանը, դիմողը ստիպված է եղել նաև հեռանալ այդտեղից, որպեսզի իրեն չգտնեն, և տեղափոխվել է այլ քաղաք: Դրանից հետո դիմողի՝ արտերկրում գտնվող եղբայրը զանգահարել է նրան և սպառնացել, որ կվնասի, կսպանի նրան:

Դիմողը անչափահաս աղջիկ է, ով բնակվում է մարզում: Նա ունի իր համաքաղաքացիների ընկալմամբ տարբերվող սանրվածք և հագուստ: Դրա պատճառով երբեմն փողոցում ենթարկվում է նվաստացուցիչ վերաբերմունքի: Նրա ընկերները ևս (ասոցացված) խտրականության և վիրավորական արտահայտությունների են արժանանում նրա հետ շփվելու համար: Դիմողն ունի նաև հոգեկան առողջության խնդիրներ. նրա մոտ առկա են մի քանի կլինիկական ախտորոշումներ: Ծնողները բուժման նպատակով նրան հոգեբույժի մոտ են տարել, որը բուժում է նշանակել, սակայն ըստ դիմողի՝ նշանակված դեղերի ընդունումն իր վրա լավ ազդեցություն չի ունենում: Երբեմն, երբ դիմողը չի ընդունում իր հաբերը, և նրա մոտ բացասական հետևանքներ են նկատվում,

25 «Կոնվերսիոն պրակտիկաների և թերապիաների իրականացման մասին ուսումնասիրությունը Հայաստանում», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2019 թ. <https://www.pinkarmenia.org/news/conversion-therapy/>:

հայրը վիրավորական արտահայտություններ է հնչեցնում դիմողի նկատմամբ: Նա անընդհատ նշում է, որ չէր ուզենա, որ իր երեխան «հոգեկան հիվանդ» լիներ:

Դիմողի ծնողները անդամակցում են կրոնական կազմակերպության, որին ստիպում են անդամակցել նաև իրենց դստերը, մասնավորապես, մասնակցել կրոնական միջոցառումներին:

Դիմողի նկատմամբ նաև պարբերաբար կիրառվում են հոգեբանական ճնշումներ, ինչպես նաև գործադրվում է ֆիզիկական բռնություն. նրան հարվածում են՝ նշելով, որ դա դաստիարակման մեթոդ է: Հոգեբանական ճնշումներն այնքան շատ են, որ դիմողը ինքը սկսել է արդարացնել իր նկատմամբ գործադրվող ֆիզիկական բռնությունը:

Դիմողը նույնասեռական տղամարդ է: Նա քթին օղ է դակել (պիրսինգ), ինչը զայրացրել է նրա հորը: Հայրը նշել է, որ դա «ղզիկական է, աղջկական բան է», պահանջել է հանել, այլապես՝ հեռանալ տնից: Դիմողը ստիպված հանել է պիրսինգը հոր ներկայությամբ, սակայն երբեմն կրել է այն հոր բացակայությամբ: Մի անգամ հայրը, նորից տեսնելով քթօղը, գոռգոռացել է դիմողի վրա, վիրավորական արտահայտություններ է հնչեցրել: Հայրը փորձել է հարձակվել դիմողի վրա՝ նրան հարվածելու նպատակով, սակայն վրա է հասել հարևանը, ով կանխել է հոր կողմից դիմողին հարվածելը: Հայրը կրկին պահանջել է հեռանալ տնից՝ վերջնաժամկետ տալով: Այնուամենայնիվ, դիմողը, հնարավորություն չունենալով հեռանալու տնից և առանձին բնակվելու, ստիպված է եղել տանը հանել օղը և կրել միայն դրսում ու ընկերական միջավայրում:

2021 թ. հունվարին բիսեքսուալ կնոջ մայրը ձեռքբերով 2-3 անգամ հարվածել և վիրավորել է դիմողին՝ կապված նրա՝ ծոծրակի հատվածում կարճ կտրված սանրվածքի հետ: Նախկինում, տեղեկանալով կնոջ սեռական կողմնորոշման մասին, մայրը դիմողի նկատմամբ գործադրել էր ֆիզիկական և հոգեբանական բռնություն:

2021 թ. ձմռանը նույնասեռական կնոջ ընտանիքի անդամները՝ մայրը, քույրը, տեղեկանալով դիմողի սեռական կողմնորոշման և նույնասեռ հարաբերությունների մասին, պարբերաբար հոգեբանական ճնշում են գործադրել նրա նկատմամբ, համոզել, որ դադարեցնի հարաբերությունները, վիրավորել կողմնորոշման հետ կապված, կանգնեցրել ընտանիքի և նույնասեռ հարաբերությունների երկընտրանքի առջև: Հետագայում կողմնորոշման մասին իմացել են ընտանիքի այլ անդամները՝ քեռին, մորաքույրը, ովքեր ևս պարբերաբար հորդորել են ավարտել նույնասեռ հարաբերությունները: Ընտանիքի անդամները սպառնացել են, որ չեն վճարի ուսման վարձը: Ընտանեկան ճնշումների արդյունքում դիմողը դադարեցրել է հարաբերությունները և սկսել է խուսափել նույնասեռական ընկերների հետ շփումից:

2020 թ. մայիսից դիմողի հայրը վերահսկել է նրա գործողությունները, թույլ չի տվել տանից դուրս գալ, հսկողություն է իրականացրել ընկերների հետ շփումների նկատմամբ, արգելել է շփվել նրանց հետ: 2021 թ. մայիսին՝

Նույնասեռ հարաբերությունների մասին իմանալուց հետո, հայրը սպառնացել է դիմողին, սպառնացել է նաև սպանել դիմողի զուգընկերուհուն: Դիմողը ստիպված է եղել հեռանալ տնից:

Նույնասեռական կնոջ ծնողները՝ մայրը և խորթ հայրը, կասկածելով դիմողի սեռական կողմնորոշման մասին, սկսել են հոգեբանական ճնշում գործադրել նրա վրա՝ վիրավորել նրան, վիրավորել ԼԳԲՏ համայնքի նրա ընկերներին, սպառնացել, որ նրա ընկերների ծնողներին կհայտնեն իրենց զավակների սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության մասին: Կնոջ մայրը սպառնացել է, որ կզրկի նրան սովորելու հնարավորությունից և չի վճարի ուսման գումարը: Դիմողի խորթ հայրը պարբերաբար բացասաբար է արտահայտվել նրա կրած հագուստների մասին: Դիմողի մայրը պարբերաբար հարվածել է նրան, ծեծել, փակի տակ է պահել սենյակում: Մայրը վերահսկողություն է իրականացրել դիմողի նկատմամբ՝ հետևելով նրա նամակագրությանը, հագուստները պարբերաբար փորփրելով: Մայրը նաև դիմողին պարբերաբար տարել է գինեկոլոգիական հետազոտությունների՝ ստուգելու նրա կուսության հանգամանքը: Մայրը նաև սպառնացել է, որ կտանի Ռուսաստան և կամուսնացնի: Դիմողին զրկել են կապի միջոցներից՝ հեռախոսից և ինտերնետից:

Դիմողն և իր զուգընկերուհին բնակվել են միասին: 2021 թ. մայիսին դիմողի եղբայրը տեղեկացել է իր քրոջ սեռական կողմնորոշման մասին, սկսել է հետապնդել նրան և զուգընկերուհուն, փնտրել, և սպառնացել, որ կվնասի նրանց: Դիմողը և իր զուգընկերուհին տարբեր անձանոթ անձանցից զանգեր են ստացել, ովքեր փորձել են պարզել՝ որտեղ են դիմողը և զուգընկերուհին: Դիմողը զանգեր է ստացել իր բարեկամուհիներից մեկից, ով նույնպես սպառնալիքներ է հնչեցրել: Դիմողը և զուգընկերուհին ստիպված հեռացել են վարձակալած բնակարանից և տեղափոխվել այլ վայր, որպեսզի դիմողի եղբայրը չգտնի իրենց:

2021 թ. մայիսին դիմողի ծնողները տեղեկացել են դիմողի սեռական կողմնորոշման մասին անհայտ անձից, ինչից հետո նրան ֆիզիկական բռնության են ենթարկել՝ քաշքշել, ծեծել, նրան փակել են սենյակում: Դիմողին զրկել են կապի միջոցներից՝ հեռախոսից, ինչպես նաև վերցրել են անձնագիրը, հագուստները: Դիմողը տանից փախչելու համար ձևացրել է, որ հոգեբույժների կարիք ունի, խնդրել է հոգեբուժական բրիգադ կանչել: Երբ ծնողները կանչել են բրիգադ, դիմողը բժիշկների հետ հեռացել է, ճանապարհին նրանց բացատրել իրավիճակը, տեղեկացրել, որ իրեն փակի տակ են պահում, ինչից հետո արդեն չի վերադարձել տուն:

Դիմողը գեյ է: Վերջինիս հայրը, մտածելով, որ իր որդին նույնասեռական է պարբերաբար փորփրել է նրա անձնական իրերը, հեռախոսի պարունակությունը՝ անձնական տեղեկություններ ստանալու համար: Մի օր նրա հայրը ուղիղ հարցրել է՝ արդյոք անձը գեյ է: Դիմողը հաստատել է դա, ինչից հետո հայրը, լինելով բժիշկ, սպառնացել է «սեռափոխել» որդուն, եթե նա «չուղղվի», բացի այդ՝ սպառնացել է տանել հոգեբույժի և հոգեբանի մոտ՝ նրան «ուղղելու» համար:

Դիմողի նախկին զուգընկերուհին, առանց նրա համաձայնության, բացահայտել է նրա սեռական կողմնորոշումը նրա եղբորը՝ հայտնելով, որ հանուն դիմողի է դա անում: Դիմողի եղբոր միջոցով այդ տեղեկատվությունը հայտնի է դարձել դիմողի ծնողներին: Դրանից հետո դիմողի ծնողները ֆիզիկական բռնության են ենթարկել նրան, մասնավորապես, հարվածներ են հասցրել: Դիմողի ընտանիքի անդամները սահմանափակել են նրա ազատությունը, թույլ չեն տվել դուրս գալ սենյակից, արհամարհել են: Բացի այդ գրկել են հեռախոսից, ինտերնետից, թույլ չեն տվել շփվել ընկերների հետ, արգելել են կրել իր ցանկացած հագուստը: Դիմողը դժվարություն է ունեցել ներկայանալու Փինքի սոցիալական աշխատակցի խորհրդատվություններին՝ հետապնդվելու և եղբոր կողմից ճնշումների ու սպառնալիքների պատճառով: Ընտանեկան բռնությունից խուսափելու համար դիմողը խոստացել է, որ «կուղղվի»:

Դիմողը անչափահաս լեւերի է: Դիմողի ծնողները թաքուն լսել են նրա խոսակցությունը ընկերներից մեկի հետ, որի ընթացքում քննարկվել է դիմողի սեռական կողմնորոշումը: Իմանալով դիմողի սեռական կողմնորոշման մասին՝ ծնողները սաստկացրել են նրա նկատմամբ սահմանափակումները, բացի այդ՝ ֆիզիկական բռնություն են գործադրել: Դիմողը փախել է տնից և դիմել ոստիկանությանը: Նրան տեղափոխել են երեխաների աջակցության կենտրոն, որտեղ նա մնացել է 1 շաբաթ, ինչից հետո վերադարձել է տուն: Տուն վերադառնալուց հետո բռնությունը շարունակվել է, ինչի պատճառով դիմողը նորից հեռացել է տնից:

2020 թ. ընթացքում դիմողի մայրը պարբերաբար վիճաբանել է նրա հետ՝ կապված վերջինիս հագուկապի, ընկերների հետ: 2021 թ. մայիսի կեսերին դիմողի մայրը իրենց տանը նկատել է դիմողի մտերմիկ հայումներն իր զուգընկերուհու հետ, ինչից հետո սկսել է հարվածել դիմողին, այդ թվում՝ հողաթափով: Դիմողը հեռացել է տնից:

Դիմողի ընտանիքի անդամները տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին: Դրանից հետո դիմողի հայրը և եղբայրը վերցրել են նրա բջջային հեռախոսը, սկսել վերահսկողություն իրականացնել անձնական կյանքի, շփումների նկատմամբ, փորձել են թույլ չտալ համալսարան գնալ, շփվել ընկերների հետ: Բացի այդ՝ դիմողի հայրը և եղբայրը վիճաբանությունների ընթացքում հարվածել են դիմողին: Դիմողի մայրը և տատը փորձել են աջակցել դիմողին՝ համոզելով բռնարարներին՝ նրան թույլ տալ կրթություն ստանալ: Դիմողը ընտանեկան բռնությունից խուսափելու համար փախել է տանից, մի քանի օր ապաստարան ստացել ընկերների տանը: Դիմողի հայրը և եղբայրը զանգերի և ծանոթների միջոցով սպառնացել են վնասել դիմողին, եթե նա տուն չվերադառնա: Դիմողը ստիպված է եղել հեռանալ այլ քաղաք, սակայն բռնարարները շարունակել են հետապնդել նրան՝ կապ հաստատելով ընկերների հետ և փորձելով գտնել դիմողին:

2021 թ. ձմռանը դիմողի ընտանիքի անդամները սկսել են քննադատել նրա արտաքին տեսքը՝ համարելով դա տղային բնորոշ, ապա սպառնացել, որ եթե իրեն «կարգի չհրավիրի»՝ դուրս կհանեն տնից: Ելնելով դիմողի արտաքինի և

վարքագծի վերաբերյալ կարծրատիպային պատկերացումներից՝ նրա ծնողները նրան ասացաքել են ԼԳԲՏ անձանց հետ, ինչի արդյունքում ստիպել են սահմանափակել ընկերների հետ շփումները և միանգամից տուն գնալ դասերից հետո: Ընտանիքի անդամները դիմողին զրկել են հեռախոսից, ժամանակավորապես թույլ չեն տվել դուրս գալ սենյակից՝ համարելով, որ ընկերները վատ ազդեցություն են ունենում նրա անձի ձևավորման ու կողմնորոշման վրա:

Դիմողը անձնական հարցով օգնության համար դիմել է սոցիալական աջաօնակների, սակայն որոշ ժամանակ անց սկսել է խուսափել պայմանավորված ժամերին խորհրդատվության գնալուց, քանի որ ընտանիքի անդամները վերահսկողություն էին իրականացնում նրա կյանքի նկատմամբ. դասերից հետո սպասում էին դպրոցի մոտ:

2021 թ. հուլիսին դիմողի քույրը նրա իրերի միջից գտել է անձնական օրագիրը, կարդացել սեռական կողմնորոշման մասին ու սպառնացել, որ կտեղեկացնի ծնողներին: Քույրը հոգեբանական բռնության է ենթարկել դիմողին, փակել սենյակում, ու խոստացել, որ եթե դիմողը չասի ծնողներին կամ «չուղղվի», ինքը կտեղեկացնի վերջիններին, և դիմողին տևից դուրս կհանեն: Դիմողի քույրը սպառնացել է, որ դիմողի զուգընկերուհու ընտանիքի անդամներին կտեղեկացնի զուգընկերուհու կողմնորոշման մասին: Դիմողը որոշել է տեղեկացնել մորը իր կողմնորոշման մասին: Դրա արդյունքում մայրը վեճ է սկսել, ասել որ հիասթափված է, որ նա հիվանդ է և այլն:

2019 թ. դիմողը հայտնել է մորը իր լեսբի լինելու հանգամանքը, ինչից հետո մայրը որոշել է դատերը հոգեբանի մոտ գրանցել՝ սեռական կողմնորոշումը «փոխելու» համար: Բացի այդ՝ դիմողի մայրը սկսել է վերահսկողություն իրականացնել դիմողի կյանքի նկատմամբ: Դիմողը այցելել է հոգեբանական մի քանի խորհրդատվության, որոնց ընթացքում հոգեբանը փորձել է ազդել դիմողի սեռական կողմնորոշման վրա, մասնավորապես, ցույց է տվել մի տղայի և ասել՝ «նայիր, միթե չես ցանկանում նրան»: Դիմողը ստիպված է եղել ձևացնել, որ իր կողմնորոշումը փոխվել է, որպեսզի չայցելի հոգեբանի: 2021 թ. ընթացքում դիմողի մյուս հարազատները ևս տեղեկացել են նրա սեռական կողմնորոշման մասին, ինչից հետո դիմողի քեռիները նրան ծեծի են ենթարկել, այնուհետև մի քանի օր փակել են սենյակում, զրկել են կապի միջոցներից, վերահսկողություն իրականացրել կյանքի նկատմամբ:

Դիմողը փախել է տնից և հաստատվել ընկերներից մեկի տանը՝ անջատելով բջջային հեռախոսը, որպեսզի ընտանիքի անդամները չկարողանան նրան գանգահարել: Դիմողի քեռին դիմել է ոստիկանությանը՝ հայտնելով, որ դիմողը անհայտ կորած է: Միացնելով հեռախոսը՝ դիմողը բազմաթիվ հոգեճնշող և սպառնալից զանգեր է ստացել: Դիմողը ստիպված է եղել վերադառնալ տուն, որտեղ նրան կրկին փակի տակ են պահել և ծեծել: Դիմողի հայրը սպառնացել է, որ կվճարի նրան և դիմողի մորը, բացի այդ՝ հայտնել է, որ դիմողի համար փեսացու է գտել Ռուսաստանում:

Որոշ ժամանակ անց դիմողը որոշել է փախչել տնից: Նրան վերադարձրել են, կողպել են դուռը, խլել նրա մոտ եղած գումարը, անձնագիրը և իրերը: Դիմողը փորձել է գտնել բանալին՝ փախչելու համար, սակայն ընտանիքի անդամները հրմշտել են նրան: Գտնելով բանալին և գտնվելով հոգեկան ծանր վիճակում՝ դիմողը խնդրել է իրեն թողնել հեռանալ տնից, սակայն ընտանիքի անդամների՝ մոր, եղբոր, տատի, բացասական պատասխանից հետո բանալիով փորձել է ինքնասպանություն գործել: Նրանից խլել են բանալին և փակել սենյակում, որտեղ նա փորձել է ավարտին հասցնել ինքնասպանությունը: Հետագայում դիմողը, օգտվելով առիթից, որ տանը մարդ չկա, փախել է տնից և հեռացել այլ քաղաք:

2021 թ. հուլիսին դիմողի հայրը, տեսնելով դիմողի դաջվածքները, նրան ծեծի է ենթարկել, ջարդել նրա բջջային հեռախոսը: Դրանից հետո դիմողին թույլ չեն տվել տնից դուրս գալ, զրկել են կապի միջոցներից, թույլ չեն տվել շփվել ընկերների հետ, զրկել են իր առօրյա հագուստից: Որոշ ժամանակ անց դիմողի մայրը կարդացել է դիմողի անձնական նամակագրությունները, ինչից տեղեկացել է դիմողի սեռական կողմնորոշման մասին: Դիմողի մայրը վիրավորել է դիմողին, հարվածել նրան: Դրանից հետո ծնողները փորձել են դիմողին փակի տակ պահել, սակայն նա գտել է բանալին և փախել տնից: Դիմողի ծնողները զանգահարել են դիմողի ընկերներին, սպառնացել, որ եթե դիմողը տուն չվերադառնա, իրենք կդիմեն ոստիկանությանը: Տանից փախչելուց մի քանի օր անց դիմողի հայրը գտել է նրան և ստիպողաբար տուն վերադարձրել: Նույն օրը դիմողը կապ է հաստատել իր ընկերներից մեկի հետ և խնդրել ոստիկանություն կանչել:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴ-ԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԶԵՐԾ ՄԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 26 մաս 1

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:²⁶

Պետական այրերը, իրավապահ մարմինների ծառայողները, պետական լիազորությամբ օժտված անձինք չպետք է ֆիզիկական կամ մտավոր բռնության ենթարկեն մասնավոր անհատներին՝ նրանց խտրականությունից պաշտպանվող որևէ հատկանիշի հիման վրա: Պետությունը քննարկվող իրավունքի պաշտպանության միջազգային պարտավորությունների ներքո պետք է կանխարգելի այլ անձանց կողմից մյուսների ֆիզիկական ապահովության խախտումը,²⁷ թույլ չտա ֆիզիկական ոտնձգությունների իրականացումը՝ ծեծը, առողջությանը վնաս պատճառելը, հարվածելը, դանակահարելը, այլ ներգործությունը անձի մարմնի նկատմամբ: Միևնույն ժամանակ, պետությունը պետք է մեխանիզմներ ստեղծի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի խախտումը վերացնելու համար: Այդպիսի մեխանիզմներից կարող են լինել համապատասխան գործողությունների քրեականացումը, տուժողին պատճառված վնասի դիմաց տրվող փոխհատուցումը:²⁸

26 Հոդված 1, «Խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ» ՄԱԿ-ի 1984 թ. կոնվենցիա

27 CAT, General comment No. 3. A v. United Kingdom, No. 25599/94, Rep. 1996-VI, judgement of 23 September 1998

28 Blanco Abad v Spain, CAT Communication No. 59/1996, 14 May 1998, Members of the Gdani Congregation of Jehovah's Witnesses v Georgia, op. cit., §97. CAT, General comment No. 2.; Torture in International Law, a guide to jurisprudence, Association for the Prevention of Torture, page 72

խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:²⁹ Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որ այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ՝ վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը:³⁰ Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որն անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,³¹ իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:³² Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում:³³ Այս դեպքերում, անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը՝ անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար:³⁴

Նույնասեռական տղամարդու ընտանիքի անդամների՝ մոր և եղբոր պահանջով նրան շտապ օգնության մեքենայով տեղափոխել են հոգեբուժական հաստատություն: Հոգեբուժական հաստատությունում բժշկական հանձնաժողովը կայացրել է նախնական եզրակացություն անձի մոտ հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ: Պետք է նշել, որ ախտորոշման գրավոր տարբերակում սեռական կողմնորոշման վերաբերյալ որևէ բան նշված չէ: Դիմողը չի ցանկացել բուժում ստանալ, ուստի հաստատությունը դիմում է ներկայացրել դատարանին՝ անձին ոչ հոժարակամ հոսպիտալացնելու և բուժելու վերաբերյալ: Անձն իր ինքնության հետ կապված խտրական և վիրավորական արտահայտություններ է լսել՝ «գյոթ, տղավարի չես, քուրիկի նման (ես պահում)»: Հոգեբուժական հաստատության գրանցամատյանում որպես անձի վարքագծի նկարագրություն նշված է «սեթևեթող վարքագիծ է դրսևորել», որը բժշկական ախտորոշման տերմին չէ: Բացի այդ՝ բուժանձնակազմը խուսափել է մեկնաբանել դիմողի վերաբերյալ կատարված նման նշումը:



Այս դեպքում տուժողը, գտնվելով փակ հաստատությունում, էլ ավելի խոցելի

29 *Pretty v. The United Kingdom*, No. 2346/02, §4
30 *Price v. UK*, ECHR ruling No 33394/96, *Costello-Roberts v. UK* ECHR ruling No. 13134/87, §30
31 *Aydin v. Turkey*, No23178/94
32 *East African Asians v. United Kingdom*, No 4715/70, 4783/71, 4827/71
33 *Smith and Grady v. United Kingdom*, No 33985/96, 33986/96
34 *Pears v. Greece*, ECHR ruling N 28524/95, ինչպես նաև խոշտանգումների եւ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001 թ. զեկույց փաստաթուղթ

իրավիճակում է հայտնվել: Հոգեբուժական հաստատության աշխատակիցների առաքելությունը պետք է լիներ անձին աջակցություն ցուցաբերելը, այլ ոչ թե ծաղրի ու նվաստացնող վերաբերմունքի արժանացնելը: Նման պարագայում, երբ տուժողը որոշակի առումով կախվածություն ունի հաստատության մասնագետներից, ունի նրանց աջակցության կարիքը, նվաստացուցիչ վերաբերմունքն ու հոգեբանական ճնշումները կարող են գնահատվել որպես անմարդկային վերաբերմունք:

■ Դիմողը 2019 թ. հոկտեմբերին հրավիրվել է ոստիկանության բաժին, որտեղ իրեն տեղեկացրել են, որ ինքը կասկածվում է պայուսակից 103.000 ՀՀ դրամ գողանալու մեջ: Ոստիկանության աշխատակիցները դիմողին մեղադրել են, քանի որ ինքը նախկինում դատապարտվել է բնակարանային գողության համար: Դիմողը ժխտել է գողությունը իր կողմից կատարվելու հանգամանքը: Ոստիկանության աշխատակիցները նրա և ընկերոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն են գործադրել՝ ծեծել են, ապտակել են, հարվածել են մարմնի տարբեր հատվածների, վիրավորել են, սեռական բնույթի հայհոյանքներ են հնչեցրել, սպառնացել են, որ կստիպեն մեղքը ընդունել: Նրանք հայտնել են, որ կբերեն այդ տարածքի բնակիչների, նրանց կծեծեն և կստիպեն իրենց դեմ ցուցմունք տալ, եթե իրենք կամ իրենցից մեկը չխոստովանի, որ ինքն է կատարել 103.000 ՀՀ դրամի հափշտակությունը:

Ոստիկանության վերաբերմունքը պայմանավորված է եղել նաև դիմողի սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնության մասին դիմողը ինքն է տեղեկացրել աշխատակիցներին: Ոստիկանները սպառնացել են ձերբակալել դիմողին և ընկերոջը՝ մեղքը չընդունելու դեպքում: Բացի այդ՝ խաբել են նրանց, հայտնել, որ եթե մեղքն ընդունեն, ամեն ինչ արագ կվերջանա, քրեական գործը կկարճվի, իրենք տուժողին կհամոզեն բողոք չներկայացնել, եթե գումարը վերադարձվի:

Դիմողին և նրա ընկերոջը խուզարկել են, վերցրել են նրանց մոտ գտնվող բոլոր իրերը, այդ թվում հեռախոսները, թույլ չեն տվել զանգահարել և փաստաբանի հետ խոսել, չեն ներկայացրել նրանց իրավունքները: Դիմողը ստիպված է եղել բացատրություն տալ և Նշել, որ այդ գումարը ինքն է վերցրել:

Հետագայում դիմողը գործով զբաղվող քննիչին տեղեկացրել է, որ իր նկատմամբ բռնության արդյունքում է հանցագործության համար մեղքն ընդունել, սակայն քննիչը դրա վրա ուշադրություն չի դարձնել: Քննիչը համոզել է, որ իրեն պաշտպան պետք չէ, քանի որ դա կձգձգի գործի քննությունը. նրա խոսքերով գործը պետք է կարճվեր: Դիմողը, հավատալով նրա խոսքերին՝ պաշտպան չի պահանջել:

■ Դատաքննության փուլում որպես դիմողի պաշտպան է ներգրավվել հանրային պաշտպան, ում խորհրդով դիմողը խնդրել է կիրառել դատաքննության արագացված կարգը՝ հույս ունենալով, որ իրեն չեն դատապարտի ազատագրկման: Ուստի այդ պատճառով էլ դատարանում չի հայտնել իր նկատմամբ ոստիկանությունում կիրառված բռնության մասին, քանի որ հավատացած էր, որ քրեական գործը կարճվելու է:

2021 թ. փետրվարի 10-ին դիմողի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, և դիմողը դատապարտվել է 4 տարվա ազատազրկման: Դատավճիռը

կայացնելուց հետո անձը հասկացել է, որ իրեն խաբել են, իրականում քրեական գործը չէր կարճվելու, և այդ ամենն արվել է, որպեսզի իրեն ստիպեն խոստովանել մեղքը մի հանցանքում, որը ինքը չի կատարել: Դիմողը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել, սակայն հետագայում քրեական գործը կարճվել է:



Նկարագրվածը դասական խոշտանգման դեպք է՝ զուգորդված տուժողների նկատմամբ իրենց սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականությամբ: Հետաքննության մարմինը օգտագործել է տուժողի սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խոցելի դրությունը և նրա նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու միջոցով ստիպել է ընդունել իր մեղավորությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումները շարունակական բնույթ են կրում, իսկ պետության կողմից որևէ միջոց չի ձեռնարկվում իրավակիրառ համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ: Իրավակիրառ մարմինների կողմից, փաստորեն, այս դեպքերի պատշաճ արձանագրման, փաստագրման ուղղությամբ աշխատանք չի տարվում: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության պատճառով կատարված հանցագործությունները պետության կողմից վարվող որևէ վիճակագրությամբ չեն արտացոլվում: Սա պայմանավորված է նախ և առաջ օրենսդրական բացով: ՀՀ քրեական օրենսգիրքը չի նախատեսում տարբերակված պատասխանատվություն այն դեպքերում, երբ հանցավորի շարժառիթը տուժողի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունն է եղել: Հետևաբար, անգամ եթե ներկայացված հաղորդումների առնչությամբ քրեական գործ է հարուցվում, ապա արարքը որակվում է որպես հասարակ հանցագործություն, հանցավորի դիտավորությունը վնասելու ոչ թե անձամբ տուժողին, այլ նրա անձնական հատկանիշը կրող անձի, հաշվի չի առնվում: Սա հանգեցնում է արարքի վտանգավորության և հետևանքների թերի գնահատման:

Միևնույն ժամանակ, վերջին տարիներին իրավակիրառ մարմինների հետ երկխոսության ընթացքում պարզվել է, որ վերջիններս տեսնում են այս խնդրի լուծումը գործող քրեական օրենսգրքի պայմաններում, այն է՝ արարքի որակումը քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում անձանց իրավահավասարությունը խախտելու համար: Այս նորմը, թերի լինելով իրավական որոշակիության առումով, որևէ կերպ չի սահմանափակում դրա կիրառման հնարավորությունը՝ սահմանելով տարբերակված վերաբերմունքից պաշտպանված հատկանիշների ոչ սպառնալից ցանկ: Չնայած այս հանգամանքին, այս հոդվածը երբևէ չի կիրառվել, անգամ այն պարագայում, երբ տուժողի ներկայացուցչի կողմից ուղղակիորեն միջևորդվել է արարքը որակել նաև այս հոդվածի շրջանակներում: Արդյունքում իրավախախտները, եթե անգամ ներգրավվում են որպես մեղադրյալ, ապա ներգրավվում են իրենց արարքի համեմատ մեղմ հոդվածի շրջանակներում: Դա կարող է հանգեցնել անթույլատրելի մեղմ պատասխանատվության: Նախկինում արձանագրված ոչ մի դեպքում իրավախախտները պատշաճ պատասխանատվության չեն ենթարկվել իրենց գործած արարքների համար: Որոշ ծանր դեպքերում, երբ հարուցված է եղել քրեական գործ և առկա է եղել մեղադրական եզրակացություն, նրանց նկատմամբ համաներում է կիրառվել: Սա ևս վկայում է ԼԳԲՏ անձանց նկատմամբ տեղի ունեցող հանցագործությունների նկատմամբ պետության անտարբեր վերաբերմունքի մասին:

Հաջորդ խնդիրը պայմանավորված է հանցագործություններն արձանագրելիս և փաստագրելիս դրանց շարժառիթների վերաբերյալ տվյալների հավաքագրման քաղաքականության բացակայության հետ: Ոստիկանության համապատասխան մարմինների կողմից նախ և առաջ չի արձանագրվում արարքի շարժառիթը, այնուհետև՝ որպես վիճակագրություն այն որևէ կերպ չի արտացոլվում: Այս առումով պետությունը խնդիր ունի նոր քաղաքականության, որի շրջանակներում կմշակվեն արձանագրման և փաստագրման հատուկ ձևաչափեր: Սա թույլ կտա պետությանը ամբողջական, համապարփակ տեղեկատվություն ունենալ երկրում

տեղի ունեցող իրավախախտումների Էուլթյան և առկա խնդիրների շուրջ:

Օրենսդրությունը թերի է ոչ միայն քրեական հանցանք հանդիսացող արարքների տեսանկյունից, այլ նաև խտրականության հասկացության ընկալման և պրակտիկայում պատասխանատվության կիրառման տեսանկյունից: Եթե քրեական գործերի պարագայում տուժողներն ունեն անվտանգություն իրավակիրառ մարմինների ու առկա օրենսդրության նկատմամբ, ապա քաղաքացիական և վարչական դատարաններում խնդիրը նախ և առաջ պայմանավորված է դատարանների կողմից խտրականության հասկացության չընկալման և Սահմանադրությունն ուղղակիորեն չկիրառելու հետ: Վարչական դատարանում գործի քննությունն այնքան երկար է տևում, որ խախտված իրավունքի վերականգնումը, եթե այդպիսին լինի, արդեն իսկ ակտուալ չի դառնում տուժողի համար: Քաղաքացիական դատարանները խտրականության վերաբերյալ հայցեր քննելիս բախվում են օրենսդրական բացի՝ մասնավոր անձանց կողմից դրսևորված խտրականությունը պատասխանատվության ենթարկելու օրենսդրական հնարավորությունների առումով:

Օրենսդրական փոփոխությունների և նոր քաղաքականության ընդունման անհրաժեշտության հարցը բազմիցս բարձրաձայնվել է ինչպես Փինքի, այնպես էլ միջազգային մարմինների կողմից՝ վերջիններիս ներկայացրած առաջարկների միջոցով:

Պետության կողմից այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն ու դրանց արդյունավետության վերլուծությունը կքննարկենք հաջորդ բաժնում:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ և ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԼՉԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 42

Խոսքի ազատությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնասյուններից մեկը, ներառում է արտահայտման գրեթե ցանկացած ձև ու բովանդակություն պարունակող խոսքը՝ ներառյալ անձի գեղեցիկ ինքնությունն ազատորեն արտահայտելու իրավունքը, որն ընդգրկում է գաղափարներ, կարծիքներ և տեղեկատվություն անձի ինքնության վերաբերյալ: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների:³⁵ Այն ներառում է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականություն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները:³⁶ Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատություն:³⁷

Ատելության խոսքի կարգավորումները

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:³⁸

35 UN Human Rights Committee, General comment No. 34

36 *Erbakan v Turkey*, No 59405/00

37 UN Human Rights Committee, General comment No. 11

38 Recommendation No. R (97) 20 of the Committee of Ministers to Member States on "Hate Speech", 1997. <https://bit.ly/2wa4QoE>

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:³⁹

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ,*
- բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,*
- գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:*

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ որոշակի խմբերի նկատմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել անձանց խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքը որոշ երկրների օրենսդրությամբ հասցեավորված է տարբեր մակարդակներում: Օրինակ՝ Կանադայի, Իսլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:⁴⁰

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները⁴¹

39 International Covenant on Civil and Political Rights, 1966, Article 19(2)

40 Համապատասխան օրենսդրական կարգավորումները հետևյալ հղումներով՝

Կանադա. <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html>,

Իսլանդիա. https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf,

Մեծ Բրիտանիա. <http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146>,

Ֆինլանդիա. <http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf>,

Ֆրանսիա. <https://www.legifrance.gouv.fr/affichCode>.

do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010,

Նիդերլանդներ. <https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19>

41 Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

- Համատեքստը, որում այն հնչում է.
- Դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նրակմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը,
- Նպատակը. կարևոր է՝ արդյոք նման խոսքը հնչեցվել է դիտավորյալ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակով, թե անզգուշությամբ,
- Բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել,
- Տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը,
- Ռիսկայնությունը:

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այնպիսի իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ,⁴² ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ: Ատելության խոսքի վտանգավորությունը կարող է ավելի բարձր լինել՝ պայմանավորված դրա հեղինակի ինքնությամբ, նրա դերով և հասարակության շրջանում վարքագծով: Մասնավորապես, առավել վտանգավոր է համարվում պաշտոնատար անձանց կողմից արտահայտված ատելությունը, քանի որ նրանք ի պաշտոնե հանդիսանում են որոշում կայացնող, հանրային քաղաքականություն մշակող մարմինների ներկայացուցիչներ, ըստ այդմ, նաև հասարակության շրջանում կարծիք ձևավորողներ: Քաղաքական և կրոնական առաջնորդները պետք է ձեռնպահ մնան անհանդուրժող կոչեր կամ արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են հրահրել բռնություն, թշնամանք կամ խտրականություն: Նրանք նաև որոշիչ դեր ունեն անհանդուրժողականության, խտրական կարծրատիպերի և ատելության խոսքի դեպքերի դեմ խոսելու առումով:⁴³

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը, պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում, նույնիսկ, պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Մասնավորապես, այդպիսի արտահայտությունները կարող են դատապարտվել պետական պաշտոնատար անձանց կողմից, կարող է նախատեսվել նաև կարգապահական պատասխանատվության միջոցներ, ինչպես պետական մարմինների ծառայողների, այնպես էլ՝ մասնագիտական հանրությունների ներկայացուցիչների համար՝ որպես Էթիկայի խախտում: Խոսքի բովանդակության վերլուծության համար հատկապես կարևոր է դրա հետևանքների գնահատումը. այն կարող է անձանց որոշակի

42 «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», «Փինք» իրավապաշտպան ՀԿ, 2016 թ. <https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/06/From-Prejudice-to-Equality-Armenian.pdf>
 43 Annual report of the United Nations High Commissioner for Human Rights, 2013, Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանորեն ճնշված վիճակում անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը, այսինքն, տարածումը հանրության լայն շրջանում, պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյոք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե ոչ: ՉԼՄ-ների կողմից նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Խնդիրը, որ Հայաստանում գործող լրատվամիջոցները հաճախ տարածում են կեղծ, չհաստատված և/կամ մանիպուլատիվ լուրեր, որոնք հակասում են լրագրողական էթիկայի կանոնների, բարձրաձայնվել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Ավելին, հաճախ լրատվամիջոցներով տարածվող խոսքը անցնում է արտահայտման ազատության սահմանները՝ պարունակելով խտրականության, թշնամանքի հրահրում հատկապես ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Հարկ է նշել, որ ստորև նկարագրված օրինակների մեծամասնությունը կրկին լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից՝ չենթարկվելով անհանդուրժողականություն պարունակող խոսքը սահմանափակող վերահսկողության: Լրատվամիջոցներով տարածվող խոսքը, որտեղ էլ այն ի սկզբանե արտահայտված է լինում, ստանում է առավել լայն տարածում հասարակության շրջանում և ազդում հասարակական տրամադրության վրա: Գաղտնիք չէ, որ լրատվամիջոցները, պայմանական անվանվելով չորրորդ իշխանություն, ունեն լայն կարծիք, մթնոլորտ և վերաբերմունք ստեղծելու կարողություն, ինչն էլ դրանց հաճախ դարձնում է գործիք քաղաքական տարբեր ուժերի կողմից:

Այլ հարթակներում հնչած խոսքի լուսաբանումից բացի, լրատվամիջոցներով տարածվում են նաև դրանց խմբագրական վերլուծությունները, որոնք նույնպես կարող են որակվել որպես արտահայտման խոսքի չարաշահում:

Ի վերջո, ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ, այսինքն, խոսքում օգտագործված արտահայտությունները պետք է կամ պարունակեն հստակ թշնամանք, որոշակի հատկանիշով պայմանավորված վիրավորանք, բռնության, խտրականության կոչեր կամ պետք է ընկալելի լինեն որպես այդպիսին. դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

Ատելության խոսքի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականությունը և առկա իրադրությունը

Նախորդ տարի հրապարակված 2020 թ.-ի վերաբերյալ գեկույցում մանրակրկիտ անդրադարձ է արվել ատելության խոսքի հիմնական դրսևորումներին և թիրախներին, հեղինակներին, դրա դեմ պետության ձեռնարկած միջոցառումներին: Մասնավորապես, 2019 թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունում Էականորեն փոխվել է ատելության խոսքի հասցեավորմանն ուղղված պետական քաղաքականությունը: Դեռևս 2019 թվականի ընթացքում Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մշակվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների պլանը, որտեղ տեղ է գտել ատելության խոսքի արգելքի օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա:

2020 թ.-ին կատարված քրեական օրենսգրքի լրացմամբ քրեական պատասխանատվություն է նախատեսվում բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար (հոդված 226.2):⁴⁴ Այնուամենայնիվ, 2020 թ.-ի ընթացքում արձանագրված անձանց սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնության կոչերի դեպքերը իրավապահ մարմինների կողմից այդպես էլ պատշաճ արձագանքի չէին արժանացել. որևէ գործ չի հարուցվել այս առնչությամբ ներկայացված հաղորդումների հիման վրա, մինչդեռ այն դեպքերում, երբ բռնության կոչերի թիրախը ԼԳԲՏ անձինք չեն, այլ քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, հարուցվել են քրեական գործեր. դրանցից մեկով անգամ առկա է դատավճիռ:⁴⁵

2021 թ.-ի ընթացքում շարունակվել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի դրսևորումները՝ առավելապես առցանց հարթակներում: ԼԳԲՏ անձանց թիրախավորող խոսքում գերակշռել են քաղաքական մանիպուլատիվ նպատակներ հետապնդող հրապարակումները: Մասնավորապես, հետպատերազմական իրադարձությունների համատեքստում ակտիվորեն սկսել են շրջանառվել Շումնուխ գյուղի հետ կապված իրադարձությունները, երբ գյուղի որոշ հատված հանձնվեց Ադրբեջանական զինված ուժերի վերահսկողությանը: Այս հարցի շուրջ հրապարակումների հեղինակները, հղում կատարելով Շումնուխում 2018 թ.-ին տեղի ունեցած ԼԳԲՏ ակտիվիստների նկատմամբ հարձակման դեպքին և ինչպես իրավապաշտպանների, այնպես էլ միջազգային հանրության կողմից դրան ուղղված դատապարտող հայտարարություններին, քննադատել են վերջիններիս լռությունը Ադրբեջանի կողմից գյուղի նկատմամբ կատարված ոտնձգությունների վերաբերյալ: Իհարկե, ԼԳԲՏ համայնքը ներկայացվել է բացասական լույսի ներքո՝ անկարևոր դարձնելով ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտման հարցը: Հեղինակների կողմից կրկին թիրախավորվել է Նիկոլ Փաշինյանը: Գրառումներ են եղել առ այն, թե վերջինս Շումնուխ գյուղը «տվեց» Ադրբեջանին, քանի որ այնտեղ ԼԳԲՏ անձանց էին մերժել:⁴⁶ Բացի այդ, այս անգամ քաղաքական նպատակներով տարվող տեղեկատվական արշավի զոհ է դարձել 2018 թ.-ին Շումնուխում տեղի ունեցած դեպքի հիմնական տուժողներից մեկի հայրը, ով ևս, չնայած նրան, որ նախկինում էլ է աչքի ընկել իր ակտիվ քաղաքացիական դիրքորոշմամբ, ներկա է եղել Նիկոլ Փաշինյանի հետ ժողովրդի հանդիպմանը:⁴⁷

Ի տարբերություն իրավակարգավորումների դրական զարգացմանը՝ պրակտիկայում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքը, ինչպես նաև արդեն իսկ գործող կարգավորում ստացած հրապարակային բռնության կոչեր պարունակող խոսքը պատշաճ գնահատական չեն ստացել իրավակիրառ մարմինների կողմից և չեն ենթարկվել արդյունավետ քննության: Ոստիկանության կողմից մերժվել է քրեական գործ հարուցելը այն հիմնավորմամբ, որ իրավախախտները ոչ թե բռնության կոչեր են արել, այլ իրացրել են իրենց ազատ արտահայտման իրավունքը: Այս տեսակետը պաշտպանվել է նաև դատախազության և դատարանների կողմից:


44 ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին». <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919>
45 ԳԴ1/0048/01/21 գործով մեղադրական եզրակացություն. http://www.datalex.am/?app=AppCase-Search&case_id=33495522228654572
46 Gohar Srapiionyan օգտատիրոջ 21.04.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1815244291995659&id=100005303177726
47 Շումնուխում Փաշինյանին «ջերմ» ընդունելության արժանացնողը ԼԳԲՏ ակտիվիստի հայրն էր, Հրապարակ, 17 հունիսի, 2021 թ. <https://hraparak.am/post/dd8328af57a8fd6f973f36bbd2dcbad9>

Վերոնշյալ նյութի արձարծունը, իհարկե, պետք է դիտարկել՝ հաշվի առնելով արտահայտված խոսքի աղբյուրը և դրա հանրային հասանելիությունը. այս դիսկուրսը տարվել է ոչ միայն հարյուր հազարավոր հետևորդ ունեցող «Ֆեյսբուք» սոցիալական կայքում, այլ նաև այն լրատվամիջոցների կողմից, որոնք թե՛ առցանց հասանելիություն ունեն, թե՛ հանդիսանում են տպագիր մամուլ: Այս հանգամանքները խոսքը դարձնում են էլ ավելի վտանգավոր՝ առավել լայն տարածման միջոցով: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել համատեքստը, որում արձարծվում է տվյալ հարցը: Հետպատերազմական շրջանում, երբ բնակչության շրջանում բարձր է հոգեհուզական մակարդակը, պատերազմի, դրանից տուժած շրջանների և անձանց վերաբերյալ ցանկացած հրապարակում կարող է հուզական կամ ագրեսիվ արձագանքի արժանանալ և թողնել էլ ավելի մեծ ազդեցություն, քան կլիներ այլ պայմաններում:

2021 թ.-ի հունվարի 17-ին և 18-ին «Տելեգրամ», «Ինստագրամ» և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցերում «Spitak Arch» կեղծ անվամբ գրանցված օգտատերը տարածել է կեղծ տեղեկատվություն առ այն, որ «Փիլք» իրավապաշտպան կազմակերպությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական միջոցներից, որ ՀՀ կառավարությունը պետական բյուջեի միջոցները վատնել է ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանության ուղղությամբ, ինչի պատճառով, չկարողանալով զենք գնել, ձախողել է Արցախյան պատերազմը:

Բացի այն, որ տարածվել է իրականությանը չհամապատասխանող, գրպարտիչ տեղեկություններ, գրությանը կից հրապարակվել են նաև կազմակերպության աշխատակիցների լուսանկարներ, իսկ գրառումը ամփոփվել է հետևյալ նախադասությամբ. «Если кто увидит этих бошей в Ереване, передайте пламенный привет. Вы знаете как», տարգմանաբար՝ «Եթե այս «բոշաներին» երևանում տեսնեք, փոխանցեք ձեր սրտանց ողջույնը. դուք գիտեք, թե ինչպես»:

Նշյալ օգտատերը ունի մեծ թվով հետևորդներ, ինչը խոսքը լսելի է դարձնում մեծաթիվ մարդկանց: Այս մասին է վկայում նաև այլ օգտատերերի կողմից ԼԳԲՏ մարդկանց և «Փիլք» իրավապաշտպան ՀԿ-ին հասցեագրված մեկնաբանությունները վերոնշյալ գրառմանը: Մեկնաբանությունները, մասնավորապես, պարունակում են վիրավորական արտահայտություններ, հայիոյանքներ, ընդհուպ մինչև՝ բռնության կոչեր: «Կարդա Նժդեհ» կեղծանվամբ օգտատերը կատարել է հետևյալ



մեկնաբանությունը, որը բռնության կոչ է պարունակում կազմակերպության գործադիր տնօրենի հասցեին,⁴⁸ ում լուսանկարը ևս առկա է գրառմանը կից. երկու այլ օգտատերեր ևս այրելու կոչ է արել:



Փաստորեն գրառման հետևանքները տեսանելի են եղել արդեն իսկ հաղորդում ներկայացնելու պահին: Մասնավորապես, բռնության կոչերն ու հայհոյանքները շարունակվել են այլ օգտատերերի կողմից, թիրախավորվել են կոնկրետ անձինք: Հարկ է նկատել, որ քրեական օրենսգրքի նոր հոդվածով քրեական գործ հարուցելու համար բավարար պետք է լինի միայն բռնության կոչերի առկայությունը, իսկ դրանց իրական և/կամ հնարավոր հետևանքների վրա հասնելը պարտադիր չէ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրառմանը կցված են անձանց՝ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակիցների և փոխկապակցված անձանց լուսանկարներ՝ վերոնշյալ բռնության կոչերը իրական վտանգ են սպառնացել այդ անձանց անվտանգությանը, նրանց համար ստեղծել են վախի և անապահովության զգացում: Այս իրադարձությունների առնչությամբ ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին, սակայն հետաքննության մարմինը որոշում է կայացրել քրեական գործ չհարուցելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ այդ իրավախախտները իրենց արտահայտման ազատությունն են իրացրել: Որոշումը բողոքարկվել է վերադաս դատախազին, այնուհետև՝ դատարան, սակայն որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

ԼԳԲՏ հարցերի արձարծումը քաղաքական մանիպուլատիվ կոնտեքստում

Անհատների թիրախավորում

Մեդիայի, ներառյալ՝ սոցիալական մեդիայի հարթակներում հաճախ հանրությանը հայտնի տարբեր անձանց թիրախավորելու նպատակով կիրառվել է նրանց որևէ կերպ ասոցացումը ԼԳԲՏ համայնքի հետ՝ արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունների և վարկաբեկիչ տեղեկատվության միջոցով: Օրինակ՝ *Աժ նախագահ Ալեն Սիմոնյանը* պարբերաբար թիրախավորվել է իր այն մտքի համար, որ նույնասեռ զույգերի ամուսնության օրինականացումը Հայաստանում ժամանակի հարց է:⁴⁹ Տարբեր օգտատերեր վիրավորական արտահայտություններ են հնչեցրել այս մտքի հեղինակի հասցեին:

Պարբերաբար թիրախավորվել է նաև Նիկոլ Փաշինյանը, ում նկատմամբ վիրավորական, հայհոյախառն արտահայտություններ են տարածվել, ներառյալ նրա՝ ԼԳԲՏ անձանց պաշտպան լինելու կոնտեքստում:⁵⁰ Ակնհայտ է, որ այստեղ ԼԳԲՏ համայնքի թեման արձարծվել է որպես Նիկոլ Փաշինյանին

48 Spitak Arch տեղեկրամյան ալիքի 16.01.2021 թ. գրառում

49 Ադասի Միքայելյան օգտատիրոջ 02.08.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/aghasi.mikaelian/posts/10224433362768860>, Մարիխուանայի, մարմավաճառության, ԼԳԲՏ անձանց ամուսնության օրինականացում. Ալեն Սիմոնյանի 10 սկանդալային իրագործելիք նպատակները, Ապառաժ, 03.08.2021 թ. <https://aparaj.am/marixuanayi-marmnavatcharuthyan-lgbt-andzanc-amusnuthyan-orinakanacum-alen-simonyani-10-skandalayin-iragortcelikh-npataknerah/> 50 Gevorg V. Grigoryan օգտատիրոջ 27.02.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/grigoryangev/posts/10219875737671683>

վարկաբեկող երևույթ, քանի որ օգտագործվել են հատկապես վիրավորական արտահայտություններ:

Նիկոլ Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը» գեղարվեստական գրքում արտահայտված մտքերը ևս դարձել են շահարկման առարկա՝ այս անգամ Երևանի պետական համալսարանի Եվրոպական հետազոտությունների կենտրոնի ղեկան, ԱԺ պատգամավոր Արթուր Ղազինյանի կողմից: «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում տեղադրելով գրքի այն հատվածը, որտեղ խոսվում է կույս տղաների և նրանց հետ առաջին սեռական հարաբերության մասին՝ նա կատարել է հետևյալ գրառումը՝ «Ու այս այլասերված կենդանին երեք տարի ղեկավարել է Հայաստանը: Դե կարդացեք սա ու ձեր «կույս տղաների» հետ մասնակցեք այս մանկապղծության շքերթին»:⁵¹

Մեկ այլ թիրախ է եղել Արման Բաբաջանյանը:⁵² Նրան վարկաբեկելու նպատակով, նվաստացուցիչ երանգով ու արտահայտություններով զուգորդված տեղեկություններ են տարածվել առ այն, թե նա հանդիսանում է նույնասեռական և թե պատրաստվում է Նիկոլ Փաշինյանի նախընտրական հանրահավաքին տանել հազարավոր նույնասեռականների, ինչի դիմաց Նիկոլ Փաշինյանը խոստացել է օրինականացնել նույնասեռ ամուսնությունները: Այսպիսի նյութերի տարածումը, իհարկե, ուղղված է ոչ միայն անհատապես Արման Բաբաջանյանի, այլ նաև Նիկոլ Փաշինյանի դեմ, ում փորձ է արվում վարկաբեկել՝ օգտագործելով հասարակության շրջանում ԼԳԲՏ համայնքի և նույնասեռ հարաբերությունների վերաբերյալ կարծրատիպային ու հոմոֆոբ վերաբերմունքը: Հարկ է նշել, որ այսպիսի նյութերի մեկնաբանություններում տարբեր անձինք հայհոյանքներ, ատելություն և անհանդուրժողականություն պարունակող արտահայտություններ են հնչեցնում ոչ միայն թիրախ հանդիսացող անձանց, այլ նաև ԼԳԲՏ անձանց հասցեին: Տարածվել են ընդհուպ միևնույն բռնության կոչեր:

Արման Բաբաջանյանի սեռական կողմնորոշման վերաբերյալ նվաստացուցիչ նյութեր են տարածվել նաև նախընտրական շրջանում իր և Լևոն Շիրինյանի կազմած դաշինքի կոնտեքստում կրկին թիրախավորելով նաև Նիկոլ Փաշինյանին՝ նրանց հովանավորը լինելու համատեքստում:⁵³ Կեղծ տեղեկություններ են տարածվել նաև Արման Բաբաջանյանի կողմից գեյ շքերթի կազմակերպման վերաբերյալ:⁵⁴

Թիրախավորվել է նաև Սահմանադրական դատարանի դատավոր, նախկինում փաստաբան Վահե Գրիգորյանը: Համացանցում տարածվել են նրա լուսանկարները իրավապաշտպան ակտիվիստների հետ՝ որպես ապացույց առ այն, որ Վահե Գրիգորյանը հանդիսանում ԼԳԲՏ ակտիվիստ և այժմ ՍԴ անդամ:⁵⁵

Մանկապուլյացիայի մեկ այլ թիրախ է դարձել Լարա Ահարոնյանը, ում իրավապաշ-

51 Artur Ghazinyan/Արթուր Ղազինյան ֆեյսբուքյան Էջի 17.06.2021 թ. գրառումը. https://www.facebook.com/story.php?story_fbid=4177347785662048&id=473981732665357

52 Rafael Hovhannisyanyan օգտատիրոջ 13.05.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/rafael.hovhannisyanyan.5/posts/4238744256156657>

53 Ruben Mkhitaranyan օգտատիրոջ 13.06.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/ruben.mkhitaranyan/posts/5605242502883702>, hrparak.am ֆեյսբուքյան Էջի մեկնաբանությունները <https://www.facebook.com/hrparak/posts/10158776727829845>

54 Analitik.am կայքում 13.04.2021 թ. հրապարակումը և ֆեյսբուքյան Էջի մեկնաբանությունները. <https://www.facebook.com/analitik.am.new/posts/3049049225328900>, Rafael Gevorgyan օգտատիրոջ 13.04.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/rafael.gevorgyan/posts/3948780258524159>

55 Զաքար Խոջաբաղյան օգտատիրոջ 11.07.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/4452176291468428>



տպան գործունեությունը տարիներ շարունակ մեկնաբանվել է որպես «նույնասեռականության քարոզ»:⁵⁶ Նրա գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն վերածվում է նրա նկատմամբ ատելության ու անհանդուրժողականության արշավի. սոցիալական ցանցերի օգտատերերը վիրավորական և նվաստացուցիչ մեկնաբանություններ են թողնում տարբեր հարթակներում: Հատկանշական է, որ տարբեր առիթներով, որոնք որևէ առնչություն չեն ունեցել ԼԳԲՏ անձանց հետ, տարածվել են վիրավորանք կամ նվաստացուցիչ արտահայտություններ: Օրինակ՝ «Սոցիոսկոպ» ՀԿ-ի կողմից իրավականացված հետազոտության ներկայացումը, որի հեղինակը «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի նախկին նախագահ Նվարդ Մարգարյանն էր, փորձ է արվել վարկաբեկել՝ կրկին թեման արհեստականորեն կապելով ԼԳԲՏ ակտիվիստների հետ:⁵⁷ Մեկ այլ դեպքում մի օգտատեր նշել է, որ կառավարությունը ֆինանսական միջոցներ ունի Մել Դալուզյանի վերաբերյալ ֆիլմ նկարահանելու համար, սակայն չունի Արցախյան երկրորդ պատերազմի հերոսներից մեկի՝ Ալբերտ պատերազմի հերոսներից մեկի՝ Ալբերտ

Հովհաննիսյանի արձանը կանգնեցնելու համար:⁵⁸ Ակնհայտ է, որ ֆիլմի նկարահանման և արձանի տեղադրման հարցերը իրար հետ որևէ առնչություն չունեն, և ֆիլմի ֆինանսավորումը իրականացվել է բոլորովին այլ պայմաններում, հստակ ծրագրի շրջանակներում, երբ անգամ Արցախյան պատերազմը չէր սկսվել: Իրականությունը խեղաթյուրող և համատեքստից կտրված այսպիսի նյութերի տարածումը և արհեստական ասոցացումը ԼԳԲՏ համայնքի հետ ստեղծում է ատելության և թշնամանքի մթնոլորտ:

Հատկապես վտանգավոր է այն հանգամանքը, որ այսպիսի լրատվական նյութերի և գրառումների շրջանակում քաղաքացիները սկսել են ԼԳԲՏ համայնքի նկատմամբ վիրավորական, նվաստացուցիչ ու խտրական կոչեր տարածել: Այսինքն, մանիպուլատիվ այս նյութերը ոչ միայն վնասում են դրանց թիրախում հայտնված անհատներին, այլ նաև էլ ավելի են խորացնում ԼԳԲՏ համայնքի նկատմամբ անհանդուրժողականությունը:

56 Հանդիպումն անցել է ջերմ մթնոլորտում. ի՞նչ են խոսել Լարա Ահարոնյանն ու Ա. Հակոբյանը, iravunk.com, 27.01.2021 թ. <https://iravunk.com/?p=194340&l=am>
 57 Չաքար Խոջաբաղյան օգտատիրոջ 30.09.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/4703566192996102>
 58 Ero Asilyan օգտատիրոջ 23.02.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/zakar.khojabaghyan/posts/4703566192996102>

Իշխանության քաղաքականության թիրախավորում

2021 թ.-ին կայացավ ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները, որի նախընտրական շրջանում իշխող ուժի և ընդդիմադիր որոշ ուժերի միջև ընթանում էր սուր պայքար: Այդ պայքարի շրջանակներում ընդդիմությունը որևէ միջոց չէր խնայում վարկաբեկելու համար իշխող ուժին՝ նրա ներկայացուցիչների հասցեին տարածելով տարատեսակ վիրավորական, նվաստացուցիչ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ու մանիպուլատիվ քարոզչանյութեր:

Այս նպատակով ընդդիմադիր խմբերը նախ և առաջ կիրառեցին վաղուց գործող մանիպուլատիվ այս մեթոդը՝ իշխանության ներկայացուցիչների նույնականացումը հասարակության շրջանում բացասական վարկանիշ ունեցող ԼԳՏՏ համայնքի հետ: Տարբեր մեխանիզմներով արծարծվում էր այն միտքը, թե իշխանությունների օգտին քվեարկությունը նշանակում է քվեարկություն ԼԳՏՏ համայնքի օգտին:

Երևան քաղաքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Միքայել Մանրիկյանը քաղաքացիներին կոչ է արել չմասնակցել Նիկոլ Փաշինյանի կողմից Հանրապետության հրապարակում կազմակերպվող հանրահավաքին՝ նշելով, թե այդ հավաքի մասնակիցները դեմ են դուրս գալիս բանակին և եկեղեցուն, աջակցում են ԼԳՏՏ համայնքին և դավաճաններին: Այս միտքը պարզ քաղաքական մանիպուլյացիա է. ավագանու անդամ հանդիսացող այս անձը որևէ ողջամիտ կապ չի նշում ԼԳՏՏ անձանց և իշխանության կողմից կազմակերպված հանրահավաքի միջև, ինչպես նաև չի նշում որևէ հիմնավորում առ այն, թե ինչպես է այդ հավաքը հակասում բանակի և եկեղեցու շահին: Ակնհայտ է, որ այս մտքի հեղինակը փորձում է օգտագործել հասարակության շրջանում բանակի և եկեղեցու նկատմամբ առկա հուզական վերաբերմունքը՝ այն համադրելով լայն տարածում ունեցող հոմոֆոբ տրամադրության հետ, որն էլ անհայտ կերպով կապվել է հավաքի հետ: Երևան քաղաքի ավագանու անդամի կողմից նմանատիպ մտքերի արտահայտումը առավել մեծ լսարան և ազդեցություն ունի, քան հասարակ քաղաքացիներինը:

Ապրիլի 7-ին ընդդիմադիր մի խումբ կանանց բողոքի ակցիայի դադարեցումը, բերման ենթարկումը ոստիկանության կողմից կրկին առիթ հանդիսացավ ԼԳՏՏ անձանց վերաբերյալ հերթական բացասական ալիքը տարածելու համար:⁵⁹ Մասնավորապես, որոշ անձինք սկսեցին մեղադրել իրավապաշտպաններին տարբերակված վերաբերմունք ցուցաբերելու համար: Օրինակ՝ «ՎԵՏՕ» նախաձեռնության անդամ Անի Հովհաննիսյանը գրառում է կատարել առ այն, թե ինչպես կարձագանքեին «սորոսական իրավապաշտպանները», եթե բերման ենթարկված լինեին ոչ թե կանայք, այլ ԼԳՏՏ անձինք: Այսպիսի դատողությունը, իհարկե, լինելով բացարձակ հիմնազուրկ, ակնհայտորեն նպատակ ունի իրավապաշտպաններին ներկայացնելու բացասական լույսի ներքո, իսկ ԼԳՏՏ անձանց՝ որպես իշխանության կողմից արտոնյալ: Հարկ է նկատել, որ ԼԳՏՏ անձինք իրականում ոչ միայն հնարավորություն չունեն հանրային որևէ միջոցառում իրականացնելու, այլև անգամ ոչ հանրային հավաքները հաճախ խոչընդոտվում են տարբեր խմբերի կամ անձանց կողմից, ինչի դեմ առկա իրավական պաշտպանության մեխանիզմները չեն գործում:

59 Կարեն Ավագյան օգտատիրոջ 11.07.2021 թ. գրառումը ֆեյսբուքում. <https://www.facebook.com/karen.avagyan.79462/posts/1091782651330526>, Սորոսի կողմից ֆինանսավորվող իրավապաշտպան կազմակերպությունները կապիտալ դիզոն բուտաֆորիաներ են. Անի Հովհաննիսյան, Analitik.am, 08.04.2021 թ. <https://analitik.am/news/view/722130>

Ներկայացված օրինակներում ատելություն, թշնամանք, անհանդուրժողականություն սերմանող խոսքը տարածվել է ոչ միայն մասնավոր անձանց կողմից, այլ նաև հասարակական լսարան ունեցող որոշ գործիչների կողմից: Ատելության խոսքի նվազ վտանգավոր դրսևորումներ են մասնավոր անձանց կողմից հնչած արտահայտությունները, որոնք, սակայն, տարածվելով սոցիալական ցանցերով, որոնցից օգտվում են հազարավոր անձինք, ձեռք են բերում ավելի լայն լսարան:

Չնայած նրան, որ 2021 թ.-ին արձանագրված դեպքերում բռնության և խտրականության կոչերը մեծ տեղ չեն զբաղեցնում, այդպիսին չհանդիսացող, սակայն անհանդուրժողականություն և հասարակության խմբերի միջև թշնամանք սերմանող խոսքը ևս համապատասխան արձագանքի պետք է արժանանա: Մասնավորապես, եթե խոսքը չի հասել այնպիսի աստիճանի, որ օրենքով նախատեսված պատասխանատվություն առաջացնի, այսինքն՝ չի պարունակում խտրականության, բռնության կոչեր կամ արդարացում, այն պետք է քննադատվի և դատապարտվի պետական իշխանության մարմինների կողմից՝ կանխելու համար հասարակության տարբեր խմբերի միջև ներդաշնակության ու համերաշխության խախտումը, խտրական վերաբերմունքն ու բռնությունը:

Պետության կողմից ձեռնարկված միջոցառումները ատելության հիմքով հանցագործությունների հասցեավորման ուղղությամբ

Օրենսդրական կարգավորումների ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներ

Համաձայն ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ ատելության հիմքով հանցագործությունը սահմանվում է որպես քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով:⁶⁰ Այսինքն, մի կողմից արարքը պետք է լինի քրեական օրենսգրքով արգելված, մյուս կողմից հանցավորը պետք է առաջնորդվի տուժողի որևէ հատկանիշի նկատմամբ իր կանխակալ վերաբերմունքով՝ ատելությամբ, անհանդուրժողականությամբ: Ատելության հիմքով հանցագործությունների դեմ օրենսդրությունը բխում է մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի պարտավորություններից, ինչպիսիք են իրավահավասարության ապահովումը, խտրականության, խոշտանգումների, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացառումը, մասնավոր և ընտանեկան կյանքի հարգումն ու պաշտպանությունը:

Տուժողի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը/արտահայտումը հայաստանյան իրականությունում հաճախ է դառնում հանցագործությունների դրդապատճառ:⁶¹ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը չի նախատեսում ատելության հիմքով հանցագործության սահմանում, ինչպես նաև դրանց նույնականացման և պատասխանատվության արդյունավետ մեխանիզմներ: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը, որով թվարկված

60 OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), "Hate Crime Laws: A practical Guide", Warsaw, Poland, 2009

61 ԼԳՔՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում. տեսությունից իրականություն, 2016 թ. https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2016/11/hate-crime-monitoring-2016_hy.pdf

են արարքի համար առավել ծանր պատասխանատվության հանգեցնող հանգամանքները, ի թիվս այլոց նշում է՝ «հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը»:⁶² Քանի որ քրեական օրենսգրքի դրույթների կիրառումն անալոգիայով արգելված է, ապա սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված հանցանքները, չեն դիտարկվում այս հոդված լույսի ներքո և քննվում են որպես հասարակ հանցագործություններ:

Ատելության հիմքով հանցագործությունների կարգավորումը կարող է տարբեր լինել ներպետական օրենսդրությամբ: Որպես առավել արդյունավետ տարբերակ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից ընտրվել է արարքի շարժառիթը՝ որպես ծանրացնող հանգամանք քրեական օրենսդրությամբ նախատեսելու ուղղությամբ ջատագովությունը:

ՀՀ կառավարությանը բազմիցս ներկայացվել են առաջարկներ՝ նախատեսելու առավել համապարփակ կարգավորում, ինչպես նաև արդյունավետ գործնական քայլերի ձեռնարկում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով հանցագործությունների պատշաճ քննությունն ապահովելու համար: Այսպիսի առաջարկներ բազմիցս են ներկայացվել նաև մարդու իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային մեխանիզմների կողմից: Դրանք շարունակական բնույթ են կրում: 2021 թ.-ին ևս որոշակի զարգացումներ են տեղի ունեցել այս ուղղությամբ:

Իր 105-րդ նստաշրջանի ընթացքում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կատարման վերաբերյալ իր ամփոփիչ դիտարկումներում⁶³ նշել է, որ Հայաստանը պետք է ապահովի, որ խտրականության իր սահմանումը ներառի դաշնագրում սահմանված խտրականության բոլոր ձևերը (ռասա, գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ կարծիք, ազգային կամ սոցիալական ծագում, ունեցվածք, ծնունդ կամ այլ կարգավիճակ): Մարդու իրավունքների կոմիտեն, մտահոգված լինելով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության բարձր մակարդակով, այս առնչությամբ հանդես է եկել հատուկ հանձնարարությամբ՝ նշելով, որ Հայաստանի կառավարությունը պետք է հստակ և պաշտոնապես հայտարարի, որ չի հանդուրժում նույնասեռականության, բիսեքսուալության կամ տրանսսեքսուալության սոցիալական խարանձան որևէ ձև, կամ ոտնձգություն, խտրականություն կամ բռնություն մարդկանց նկատմամբ՝ նրանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով: Մասնակից պետությունը պետք է արգելի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված խտրականությունը և արդյունավետ պաշտպանություն ապահովի ԼԳԲՏ անձանց համար:

ՀՀ կառավարությունը, սակայն, վերը նշված հարցերի վերաբերյալ հստակ հայտարարություն չի արել: Կառավարության զեկույցում նշվում է, որ «Հավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծն ընթացքի մեջ է, սակայն որևէ անդրադարձ չի արվել սեռական կողմնորոշման և գենդերային

62 Հոդված 63, ՀՀ Քրեական օրենսգրքը 2003 թ. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108718>

63 UN Human Rights Committee (HRC), UN Human Rights Committee: Concluding Observations Armenia CCPR/C/ARM/CO/2, 105th Session, 9-27 July 2012. <http://www.ohchr.org/EN/Countries/ENACARRegion/Pages/AMIndex.aspx>

ինքնության հիմքով խտրականության մասին: Հատկանշական է, որ օրենքի նախագիծը, սակայն, չի համապատասխանում փոքրամասնությունների համապարփակ և պատշաճ պաշտպանության մասին վերը նշված պահանջներին: Կառավարությունը որևէ տեղեկություն չի ներկայացրել ռասայական խտրականության դեմ պայքարի և դրանց նպատակների իրագործումն ապահովելու ջանքերի մասին: Արդյունքում հանձնաժողովը հարցերի նոր ցանկ է ուղարկել կառավարություն՝ խնդրելով թարմացված տեղեկատվություն իրավական հավասարության ապահովման մասին օրենքի նախագծի կարգավիճակի վերաբերյալ՝ անդրադառնալով դրա ոչ համապարփակության և արդյունավետ իրավական պաշտպանության երաշխիքների բացակայության մասին մտահոգություններին: Մարդու իրավունքների կոմիտեն նաև խնդրել է պետությանը տրամադրել տեղեկատվություն, թե արդյոք Քրեական օրենսգիրքը բացահայտորեն արգելում է ատելության հողի վրա կատարվող հանցագործությունները և ատելության խոսքը բոլոր արգելված հիմքերով, ներառյալ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, ինչպես նաև սոցիալական խարանձան, ոտնձգությունների, բռնության և արդյունավետ կերպով հակազդելու միջոցների մասին: Կոմիտեն խնդրել է Պետությանը մեկնաբանել քաղաքական գործիչների և պետական այլ պաշտոնյաների կողմից հոմոֆոբ և տրանսֆոբ հռետորաբանության անպատիժ մնալու վերաբերյալ տեղեկությունները:⁶⁴

Անդրադառնալով ատելության հիմքով հանցագործությունների պատշաճ հետաքննությանն ու սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված հանցագործությունների դեմ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ նախատեսող օրենսդրական փոփոխություններին, կառավարությունը տեղեկացրել էր, որ հաշվետու ժամանակահատվածում քրեական գործեր չեն հարուցվել և նյութեր չեն նախապատրաստվել ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ բռնության դեպքերի առնչությամբ:⁶⁵ Կառավարությունն անդրադարձել է նաև հակախտրականության դեմ համապարփակ օրենքի ընդունման հարցին՝ նշելով, որ «ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հավաստել է, որ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի առաջարկությունները հաշվի են առնվել և օրենքի նախագիծը համապատասխանեցվել է համապատասխան միջազգային չափանիշներին:

Բացի այն, որ թե՛ պետական մարմինների հետ ուղիղ հաղորդակցության միջոցով, թե՛ միջազգային մեխանիզմներն օգտագործելով իրականացվում է օրենսդրական փոփոխությունների ջատագովություն: Փիևքը խնդիրը փորձել է հասցեավորել նաև ռազմավարական դատավարությունների միջոցով՝ փորձելով հասնել նրան, որ օրենսդրական բացն ու ոչ պատշաճ քննությունը ճանաչվի մարդու իրավունքների խախտում: Երբեմն ռազմավարական դատավարությունները, ներպետական ատյաններում լուծում չստանալով, տեղափոխվում են միջազգային ատյաններ:

Առաջին դիմումը Մարդու իրավունքների եվրոպական դատարան ընդդեմ Հայաստանի՝ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների ոչ պատշաճ քննության վերաբերյալ ներկայացվել է 2013 թվականին և դեռ գտնվում է ՄԻԵԴ-ում: Խոսքը վերաբերում է Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործին. Օգանեզովան իր սեռական կողմնորոշման հիմքով ենթարկվել է ատելության հիմքով հանցագործության և արդյունավետ իրավական պաշտպանության

64 Human Rights Committee, CCPR List of Issues. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fQ%2f3

65 Republic of Armenia Government reply to the List of Issues requested by the Human Rights Committee. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR%2fC%2fARM%2fRQ%2f3

միջոցներ չի գտել: Խոսքը վերաբերում է «Դի-Այ-Ուայ» ակումբի պայթեցմանը (Տես՝ Հավելված 1): Կառավարությունն այս դեպքում ընդունել է, որ միջադեպը չի հետաքննվել որպես ատելության հիմքով հանցագործություն, քանի որ քրեական օրենսդրության մեջ չկան համապատասխան կարգավորող դրույթներ:

2021 թ.-ի ընթացքում կյանքի կոչվեց տարիներ շարունակ քննարկվող Նոր քրեական օրենսգրքի ընդունումը, որով կբարելավվի ատելության հիմքով հանցագործությունների իրավակարգավորումների շրջանակը:

Նոր քրեական օրենսգիրքն ընդունվել է խորհրդարանի կողմից 2021 թվականին, սակայն այն ուժի մեջ կմտնի 2022 թվականի հուլիսին: Նոր օրենսգիրքն ընդլայնել է պատասխանատվության և պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկը՝ հնարավորություն ստեղծելով այն կիրառելու ատելության հիմքով հանցագործության գործերում հիմքերի ոչ սպառնիչ ցանկով:

Մասնավորապես, վերաձևակերպվել է 71-րդ հոդվածը (Նախկինում 63), որը նախատեսում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ: Նոր ձևակերպմամբ՝ ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, սոցիալական կամ անձնական բնույթի այլ հանգամանքների հիման վրա ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի դրդմամբ կատարված հանցագործությունները կհանգեցնեն ավելի ծանր պատասխանատվության և պատիժ: Իհարկե, լավագույն տարբերակը կլիներ սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը ուղղակիորեն նախատեսելը՝ որպես ծանրացնող հանգամանքի հիմք, ինչը կապահովեր օրենսդրական կարգավորման որոշակիություն և կանխատեսելիություն: Այնուամենայնիվ, ներկայացված փոփոխությունը կարելի է գնահատել որպես առաջընթաց, որը թույլ է տալիս իրավակիրառ պրակտիկայում հասնել ՍԿԳԻ-ով պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների պատշաճ որակման և ըստ էության քննության:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ 71-րդ հոդվածը (գործող օրենսգրքի 63-րդ հոդվածը) հանդիսանում է քրեական օրենսգրքի ընդհանուր մասի հոդված, որը կարող է կիրառվել դատարանի կողմից, սակայն չի կարող կիրառվել նախաքննության մարմնի կողմից, եթե օրենսգրքի հատուկ մասում նախատեսված հոդվածներով ուղղակիորեն նախատեսված չեն պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքները: Նման մոտեցումը բխում է իրավական ակտերի որոշակիության սկզբունքի պահանջից: Այս առումով ևս Նոր քրեական օրենսգիրքը կարելի է առաջընթաց համարել: Մասնավորապես, որոշակի խմբագրման է ենթարկվել քրեական պատասխանատվություն առաջացնող գործողությունների ձևակերպումն ու հատուկ մասի այդ հոդվածներում հանցագործի կողմնակալ դրդապատճառի ներառումը որպես ծանրացնող հանգամանք: Եթե նախկինում ծեծի կամ ֆիզիկական կամ հոգեբանական ցավ պատճառելու հոդվածները չէին կարող դիտարկվել որպես ծանրացնող հանգամանքներում կատարված արարքներ՝ տվյալ արարքներն արգելելով հոդվածներում ծանրացնող հանգամանքի բացակայության պատճառով, ապա Նոր քրեական օրենսգրքով այս հարցը կլուծվի: Ատելության հիմքով առավել հաճախ հանդիպող հանցագործությունները կարելի է ամփոփել հետևյալ հոդվածներում, որոնց Նոր օրենսգրքով նախատեսում են նաև առավել ծանր պատասխանատվություն՝

- ֆիզիկական ներգործություն (հոդված 195, նախկինում նախատեսված որպես ծեծ, հոդված 118),

- ծանր ֆիզիկական կամ հոգեկան ցավ կամ տառապանք պատճառելը (հոդված 196, նախկինում նախատեսված 119-րդ հոդվածով),
- հոգեբանական ներգործություն (հոդված 194, նախկինում որպես սպառնալիք, որը ենթադրում էր պատասխանատվություն միայն սպանության, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքի համար, հոդված 137), որը ենթադրում է պատասխանատվություն սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգումների, սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, առևանգման, ազատությունից ապօրինի զրկելու կամ մեծ կամ առանձնապես խոշոր չափերի գույքի ոչնչացման սպառնալիքների համար:

Արարքը կարող է որակվել որպես ֆիզիկական բռնություն, եթե հարվածը կամ այլ բռնի գործողությունները չեն առաջացրել 171-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ (առողջությանը թեթև վնաս պատճառելը): Արարքը կարող է որակվել որպես ֆիզիկական կամ հոգեկան ծանր ցավի կամ տառապանքի պատճառ, եթե արարքները չեն առաջացրել 166-րդ հոդվածի 167-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ (միջին ծանրության և առողջությանը ծանր վնաս պատճառելը):

Փոփոխություններ են կատարվել նաև խտրականությունն ու ատելության խոսքը կարգավորող դրույթներում:

Նոր քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով քրեականացվում է խտրականությունը: Հոդվածը տրամադրում է պաշտպանված հիմքերի բաց ցանկ՝ սահմանելով խտրականությունը որպես տարբերակված վերաբերմունքի դրսևորում, որը ոտնահարում է անձի պատիվն ու արժանապատվությունը կամ իրավունքներն ու ազատությունները, կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ իրավաչափ նպատակի՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծննդի, առողջական վիճակի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով:

Նախկինում 226-րդ հոդվածը, որը նախատեսում է քրեական պատասխանատվություն ատելության, թշամանքի կամ անհանդուրժողականության դրդման համար, հանվել է: Այնուամենայնիվ, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշամանք հրահրող կամ քարոզող հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութերի կամ առարկաների տարածումը՝ անձի կամ անձանց խմբի ռասայի, ազգի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ինչպես նաև անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հիմքով, կառաջացնի քրեական պատասխանատվություն: (329-րդ հոդված):

Ատելության հիմքով հանցագործությունների քննության պրակտիկայի փոփոխության ուղղությամբ ձեռնարվող միջոցառումներ

2021 թ.-ին ՀՀ Կառավարությունը, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի հետ համագործակցությամբ ատելության հիմքով հանցագործությունների հասցեավորման նոր փուլի

սկիզբ դրեց: Մասնավորապես, ստորագրվեց համագործակցության հուշագիր ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի, ՀՀ գլխավոր դատախազության, քննչական կոմիտեի, Արդարադատության ակադեմիայի և Ոստիկանական կրթահամալիրի միջև, որի շրջանակներում նախատեսվում է կասկադային վերապատրաստման դասընթացների իրականացում ոստիկանների, քննիչների և դատախազների համար: Նախնական փուլում կազմակերպվել է դասընթացավարների վերապատրաստում, որում ներգրավվել են նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ներառյալ՝ «Փինք» ՀԿ-ի ներկայացուցիչը: Դասընթացների ծրագրում նախատեսված է ատելության հիմքով հանցագործությունների առանձնահատկությունների համակողմանի անդրադարձ. մասնավորապես, ներառված է ատելության հիմքով հանցագործությունների հասկացության, կանխակալության, կողմնակալության ցուցիչների, դրանց նույնականացման և բացահայտման, դրանց ապացուցման միջոցների, ինչպես նաև տուժողների հետ աշխատանքի առանձնահատկությունների, նրանց նկատմամբ զգայուն և հարգալից վերաբերմունքի, գործերի քննության ընթացքում ծագող ընթացակարգային կարիքների և հանդիպող խնդիրների շուրջ թեմաներ: Նախատեսվում է վերապատրաստված անձանց կողմից կասկադային դասընթացների անցկացում իրավակիրառ մարմինների հետ՝ Ոստիկանական կրթահամալիրի և Արդարադատության ակադեմիայի միջոցով: Դասընթացների ծրագրերն ու անցկացման ժամանակացույցը մշակելու, ինչպես նաև ծրագրի արդյունավետության նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնցում ներգրավված են համագործակցության հուշագրի կողմերը, ինչպես նաև կառավարության այլ շահագրգիռ մարմիններ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Կառավարության կողմից այս ծրագրի մեկնարկը կարելի է գնահատել որպես աննախադեպ քայլ դեպի ատելության հիմքով հանցագործությունների հասցեավորումն ու պատշաճ քննության ապահովումը: Նախկինում կառավարությունը ոչ միայն հատուկ միջոցներ չի ձեռնարկել ատելության հիմքով հանցագործությունների քննությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ, այլ առհասարակ հրաժարվել է ընդունել, որ Հայաստանում առկա է նման երևույթ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 2021 թ.-ի ընթացքում ԼԳՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը՝ հարկ է փաստել, որ չնայած այն հանգամանքին, որ իրավախախտումները նախորդ տարիների համեմատ չեն նվազել և չեն փոխել իրենց բնույթը, պետության քաղաքականությունը որոշակի փոփոխություններ է կրել: Օրենսդրական նոր փոփոխությունները, մասնավորապես, քրեական նոր օրենսգրքի ընդունումը, ինչպես նաև իրավակիրառ մարմինների, այսինքն՝ ոստիկանների, քննիչների, դատախազների վերապատրաստումը ատելության հիմքով հանցագործությունների քննության, բացահայտման և իրավական որակման շուրջ ստեղծում են նպաստավոր պայմաններ ԼԳՏ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության համար: Նշյալ փոփոխություններով հնարավորություն է ստեղծվում խթանելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով իրավախախտումների որակումն ու քննությունը, որտեղ հաշվի կառնվեն իրավախախտների կողմնակալ վերաբերմունքն ու շարժառիթները: Չնայած նրան, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ուղղակիորեն նշված չեն որպես խտրականությունից, ատելության հիմքով հանցագործություններից և ատելության խոսքից պաշտպանված հատկանիշներ, դրանց ոչ սպառիչ ցանկը նախկին սահմանափակ ցանկի համեմատ կարելի է համարել դրական տեղաշարժ:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԼԳՏ անձանց իրավունքների ոտնահարումները դեռևս մնում են անպատիժ և որպես այդպիսին չեն հասցեավորվում իրավակիրառ մարմինների կողմից: Նույն խոչընդոտները, որոնք պատճառ էին դառնում նախորդ տարիներին արձանագրված դեպքերում իրավական պաշտպանության մեխանիզմների արդյունավետ գործողության համար, ամկա են եղել նաև 2021 թ.-ին: Տուժողների վերաբերմունքն ու անվստահությունը իրավակիրառ մարմինների նկատմամբ չի փոխվել, ինչը էլ ավելի է հեռացնում իրավիճակը կարգավորումից: Անպատժելիության այս մթնոլորտի շարունակության պարագայում օրենսդրական որևէ դրական փոփոխություն չի կարող համարվել արդյունավետ, իսկ պետության քաղաքականությունը չի կարող համարվել մարդակենտրոն: Պետության կողմից ձեռնարկված գործողությունների արդյունավետությունը, հետևաբար նաև Հայաստանում ԼԳՏ անձանց իրավունքների պաշտպանվածության մակարդակը հնարավոր կլինի գնահատել միայն գործնականում արձանագրված դեպքերի ընթացքի վերլուծության հիման վրա:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ 2020 թ.-ի քրեական օրենսգրքի լրացումը, որով քրեականացվեց հրապարակային բռնության կոչերը, իրավակիրառ պրակտիկայում ամենևին արդյունավետ չէ ԼԳՏ անձանց նկատմամբ բռնությունների կոչերի և դրանց արդարացնող հրապարակային խոսքի դեմ պայքարի համատեքստում: Մյուս կողմից, իրավակիրառ մարմինները, ներառյալ՝ դատարանները, միշտ չէ, որ ունեն բավարար կարողություններ և քաղաքական կամք լայնորեն կիրառելու օրենքի դրույթները այն պարագայում, երբ դրանք տառացի ձևակերպում չունեն և հայեցողական մեկնաբանման տեղիք են տալիս: Այսպիսի իրավիճակում հնարավոր չէ միանշանակ հուսալ այսպիսի կարգավորումների արդյունավետ կիրառման մասին:

Չուզահեռաբար, բռնության կոչեր, ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի հանդեպ պետական մարմինների անտարբեր վերաբերմունքը ևս խթանում է ԼԳՏ անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքի խորացումը և առավել հավանական է դարձնում տարբերակված, խտրական վերաբերմունքը տարբեր իրավահարաբերություններում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ-ում ԼԳՏՏ անձանց իրավունքների համապարփակ պաշտպանությունը ապահովելու համար՝ առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին՝

- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳՏՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանում:
- ԼԳՏՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները, ներառյալ՝ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող խոսքը դատապարտելուց:
- Իրականացնել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, միջազգային իրավական փորձի համապարփակ ուսումնասիրություն և երկրում առկա իրավիճակի վերլուծություն՝ նախատեսելու համար ատելության խոսքի՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան և գործուն իրավակարգավորումներ, որոնք պաշտպանություն կնախատեսեն բոլոր խոցելի խմբերի համար:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ՝ ԼԳՏՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳՏՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
Արդյունավետորեն կիրառել բռնությունների հրապարակային կոչերի ու դրանց արդարացման համար քրեական պատասխանատվություն նախատեսող նորմը՝ ԼԳՏՏ անձանց համար ապահով կենսապայմաններ ստեղծելու նպատակով:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի՝
 - խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով,
 - մասնավոր կառույցների կամ անձանց կողմից խտրականության

արգելքի արդյունավետ իրավակարգավորումներ,

- կնախատեսի հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը հանրային շահի պաշտպանության գործերով:

- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես, նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ըստ էության որակման, ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ՝ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես, նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Շարունակական դարձնել ատելության հիմքով հանցագործությունների զոհերի և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ներգրավելով ատելության հիմքով հանցագործությունների վերապատրաստված դասընթացավարներին, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների փորձագետներին:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես, հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով:

Չանգվածային լրատվության միջոցներին`

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները` հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա` զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին`

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության աջակցման նպատակով:
- Մարդու իրավունքներին առնչվող զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին`

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Իրավահավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև` այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն 2012 թ.-ից ի վեր վարել է ռազմավարական դատավարություններ, որոնց նպատակն է հասնել փոփոխությունների ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ՝ հանրային քաղաքականության մեջ:

2021 թ.-ին ռազմավարական դատավարություններից երկուսի քննությունը ունեցել է որոշակի զարգացում: Դրանք գտնվում են ներպետական դատական ատյանների վարույթում: Կազմակերպության կողմից վարվող ռազմավարական դատավարության այլ դեպքերով 2021 թ. ընթացքում զարգացում չի դիտվել:⁶⁶

Վարչական դատարանի քննության առարկա վեճը վերաբերում է Փինքի կողմից 2017 թ.-ին հրապարակված սոցիալական գովազդների պաստառների շուրջ ծագած խնդրին՝ հետևյալ փաստերով՝



2017 թ.-ին վերոնշյալ գովազդային պաստառները ներկայացվել են ՀՀ մշակույթի նախարարությանը՝ սոցիալական գովազդ ճանաչելու պահանջով: Պաստառների ճանաչումը որպես սոցիալական գովազդ հնարավորություն կտար օգտվել սոցիալական գովազդի համար նախատեսված հնարավորություններից, այն է՝ դրանց անվճար տեղադրումը գովազդային վահանակների վրա, դրանց համար պարբերաբար տրամադրվող վահանակներից օգտվելու հնարավորություն և այլն:

Մշակույթի նախարարությունը մերժել է Փինքի դիմումը այն հիմնավորմամբ, որ ներկայացված գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում, բացի այդ, ժողովուրդը հեռուստահաղորդումներից ծանոթ է «ոչ ավանդական սեռական կողմնորոշում» ունեցող մարդկանց գոյության մասին, հետևաբար դրանց տարածման անհրաժեշտությունը չկա:

Փինքի կողմից հայցադիմում է ներկայացվել վարչական դատարան՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից դիմումը մերժելու մասին վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և նախարարությանը սոցիալական գովազդները սոցիալական ճանաչելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջով: Հայցադիմումը մերժվել է առաջին ատյանի վարչական դատարանի կողմից: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը մասնակի բավարարել է բողոքը՝ գործը ուղարկելով առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: 2021 թ.-ի ընթացքում շարունակվել է գործի քննությունը առաջին ատյանի դատարանում: Վճիռը սպասում է 2022 թ.-ին:

66 Մանրամասն, տե՛ս այստեղ. <https://www.pinkarmenia.org/strategiclitigation/>

Ներպետական ատյաններում շարունակվում է Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքի քննությունը.

2018 թ. օգոստոսի 3-ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳՏՏ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության են ենթարկվել նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20 բնակիչների կողմից, որոնք տուժողներից պահանջել են հեռանալ գյուղից, հարվածել են նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով: Բռնության ամենազուրկ քրեական գործ է հարուցվել միայն ծեծի հոդվածով, և որևէ անձ չի ներգրավվել որպես մեղադրյալ: Ցուցմունքներով իրենց մեղքն ընդունած անձանց նկատմամբ կիրառվել է համաներում և քրեական գործի վարույթը կարճվել է: Բռնություն գործադրած անձանց մեծամասնության նկատմամբ ընդհանրապես քրեական հետապնդում չի իրականացվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ նրանց գործողություններում հանցակազմ առկա չէ:

2019 թ. դեկտեմբերին քրեական գործով վարույթը կարճելու որոշումը տուժող կողմի բողոքի հիման վրա վերացվել է, քրեական գործի վարույթը վերսկսվել է: 2020 թ. ընթացքում գործով ներկայացված ևս 2 բողոքի արդյունքում դատարանները արձանագրել են, որ վարույթն իրականացնող մարմինը քննությունը թերի է կատարել:

Գործով քննության վերսկսումից հետո որևէ անձի մեղադրանք չի ներկայացվել: ՀՀ քրեական օրենսգրքի՝ խտրականության համար պատիժ և պատասխանատվություն նախատեսող հոդվածը քննության առարկա չի դարձվել:

2021 թ. փետրվարին վարույթն իրականացնող մարմինը կրկին որոշում է կայացրել քրեական գործով վարույթը կարճելու մասին, այս անգամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Որոշումը բողոքարկվել է վերադատության կարգով:



Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007 թ.-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277